ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

Գ. Ա. ԴԱԼՈՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

XIV դ. վերջում հայոց պետականության անկումից և XVI դարում Հայաստանը Թուրքիայի ու Պարսկաստանի միջև բաժանվելուց ի վեր հայ ժողովուրդը չի դադարեցրել պայքարը իր պատմական տարածքներում հայոց պետականության վերականգնման համար։ Հայ ժողովրդի պատմությանը շատ թե քիչ ծանոթ մարդկանց հայտնի է այդ պայքարի անդաժ փուլերի պատմությունը, որոնց ընթացքում, որպես կանոն, վճռական դեր է պատկանել խոշոր տերություններին։ Հայաստանը, գտնվելով Արևելքի և Արևմուտքի խաչմերուկներում, միշտ էլ շահագրգիռ հետաքրքրություն է ներկայացրել այդ տերությունների համար։*

XIX դ. երկրորդ կեսին միջազգային դիվանագիտության ուշադրության կենտրոնում գտնվող Հայկական հարցը հատկապես սրվեց առաջին համաշխարհային պատերազմին նախորդող տարիներին, երբ օրակարգի մեջ էր դրված աշխարհի վերաբաժանման հարցը։

Հայկական հարցի վերաբերյալ 1913 թ. հրավիրված եվրոպական տերությունների կոնֆերանսն ընդունակ չգտնվեց մշակելու Թուրքիայի վրա Ճընշում գործադրելու կոլեկտիվ միջոցներ՝ Արևմտյան Հայաստանում բարենորոգումների անցկացմանը հասնելու համար։

Պատերազմը մեծ ավերումներ բերեց աշխարհի բոլոր ժողովուրդներին, սակայն առավել ողբերգական եղավ հայ ժողովրդի համար, երբ պատերազմի ընթացքում, հատկապես 1915—1916 թթ. Արևմտյան Հայաստանում երիտթուրքերն իրականացրեցին վաղուց ի վեր մշակած հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման պլանը։ Դա Արևմտյան Հայաստանում XIX դ. երկրորդ կեսին Աբդուլ Համիդի իրագործած ոճրագործ քաղաքականության շարունակությունն էր։ Իսկ եվրոպական տերությունները, որոնք չկարողացան կանխել ամբողջ մարդկության դեմ ուղղված այդ ոճրագործությունը, նույնիսկ տարիներ անց պաշտոնապես չդատապարտեցին այդ հանցագործությունը։

Միայն Լլոյդ Ջորջը, այն էլ քաղաքական ասպարեզից հեռանալուց հետո, իր հուշերում խոստովանեց, որ «Հայաստանը մեր ղոհն է», որ Հայաստանը «զոհաբերվեց մեր կերտած հաղթանակի զոհասեղանին։ Ռուսները ստիպված էին հեռանալ. դժբախտ հայերը նորից հայտնվեցին իրենց հին կեղեքողների կրունկների տակ... Բրիտանական կառավարությունն քաղաքականությունը ճակատագրական անխուսափելիությամբ հանգեցրեց 1895—1897 և 1909 թվականների սարսափելի ջարդերին և 1915 թվականի դարհուրելի կոտորածին... հենց մենք Թուրքերին հնարավորություն տվեցինք իրագործելու այդ ոճրագործությունը»[1]։

---

* *1993 թ. սեպտեմբերին Անգլիայում (Լոնդոն-Օքսֆորդ) տեղի ունեցած Հայկական ուսումնասիրությունների միջազգային կենտրոնի գիտաժողովում խնդրո առարկա թեմայով հեղինակը հանդես է եկել զեկուցումով։*

[1] Ллойд Джордж. Правда о мирных договорах, т. 2, М., 1957, с. 390: *Լլոյդ Ջորջի այս խոստովանությունը մեզ հիմք չի տալիս, իհարկե, մեղադրել ամբողջ անգլիական ժողովրդին։ «Մենք» ասելով նա ի նկատի է ունեցել Անտանտի տերությունների քաղաքական շրջանները։ Անգլիական բազմաթիվ գործիչներ, ժողովրդական լայն խավերի ներկայացուցիչներ ամենատրտցավ վերաբերմունք են դրսևորել հայ ժողովրդի ճակատագրի նկատմամբ։ Նույնը կարելի է ասել նաև Ամերիկայի Միացյալ Նահանգների մասին։ Այս երկու երկրներում էլ ժամանակին ստեղծվել են հայերին օգնող կազմակերպություններ, որոնք, բացի հումանիտար օգնությունից, շատ բան են արել Արևմուտքի երկրներում Հայկական հարցի շուրջ հասարակական ճիշտ կարծիք ստեղծելու խնդրում։*

Թուրքական իշխանություններն ակնկալում էին, որ Արևմտյան Հայաստանում հայերի բնաջնջմամբ վերջ կտրվի նաև Հայկական հարցին։ Սակայն պատերազմի ավարտից հետո, երբ Անտանտի տերությունները այդ պատերազմից դուրս եկան հաղթությամբ, իսկ կոտորածի հետևանքով աշխարհով մեկ սփռված հայությունը շարունակում էր պայքարը իր օրինական իրավունքները ճանաչեցնելու համար, պատմական իրադարձությունների բերումով Կովկասյան Հայաստանում ստեղծվեց Հայաստանի Հանրապետությունը։ Հայկական հարցը բորբոքվեց նոր ուժով։

Հարցի բուն էությանն անդրադառնալուց առաջ կուզենայինք նախ և առաջ նշել հետևյալը։

Առաջին համաշխարհային պատերազմից հետո Հայկական հարցի պատմությունը բավական լայն լուսաբանություն է գտել ինչպես նախկին Խորհրդային Միության, այնպես էլ արևմտյան երկրների պատմաբանների աշխատություններում։

Մեզ՝ նախկին Խորհրդային Միության պատմաբաններիս, մատչելի են եղել մեր երկրի արխիվների նյութերը, Արևմուտքի պատմաբաններին՝ իրենցը։ Ընդ որում, մեր արխիվների շատ նյութեր փակ են եղել նույնիսկ մեզ համար։ Էլ չեմ խոսում այն մասին, որ Արևմուտքի երկրների արխիվներից օգտվելը ևս, հայտնի պատճառներով, մեզ անմատչելի է եղել։ Հակառակ հայեցակետից նույնը կարելի է ասել արևմտյան երկրների պատմաբանների մասին։

Այդ հանգամանքով թելադրված գործոններն ամբողջությամբ վերցրած իրենց կնիքն են դրել հրապարակի վրա գտնվող գրականության վրա։ Մենք Արևմուտքի պատմաբաններին ենք մեղադրել պատմությունը կեղծելու մեջ, նրանք՝ մեզ։

Եկել է ժամանակը, երբ անհրաժեշտ է սերտ համագործակցություն ստեղծել և համատեղ ջանքերով, վեր կանգնելով գաղափարական նախկին կաշկանդումներից, փորձել վերականգնել պատմական ճշմարտությունը։ Դա մեր բոլորիս մասնագիտական պարտքն է։

Խնդրո առարկա հիմնահարցը այսօր խիստ արդիական բնույթ է կրում, որովհետև շատ ընդհանրություններ կան 1918—1921 թվականների և վերջին տարիներին Անդրկովկասում ծավալվող իրադարձությունների միջև։ Ե՞վ այն տարիներին, և՛ այժմ առանցքային հարց է Անդրկովկասում անկախ պետություններ ստեղծելու և այդ դորշընթացների վրա ինչպես Անդրկովկասի հարևան պետությունների (Ռուսաստան, Թուրքիա, Իրան), այնպես էլ Արևմտյան երկրների ազդեցության հարցը։ Այս շրջանում խիստ սրվեցին բուն անդրկովկասյան պետությունների փոխհարաբերությունները, հատկապես տարածքային հարցերում, որոնք շատ դժերով կրկնվում են և որոշակիորեն պայմանավորված են 1918—1921 թթ. ստացած լուծումներով։

Այսպիսով, հիմնահարցը շատ բարդ է և դժվար է միանշանակ գնահատականներ տալը։ Կարևորն այն է, որ այսօր հնարավորություն է ընձեռվել աղատ բանավիճել՝ ճշմարտությունը գտնելու համար։

Հայկական հարցի լուծման հեռանկարների վրա վճռորոշ դեր ունեցավ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը Ռուսաստանում, որը արմատական փոփոխություններ առաջացրեց Ռուսաստանի և արևմտյան տերությունների հարաբերությունների միջև։ Եթե մինչ այդ Ռուսաստանի և արևմտյան տերությունների միջև Հայկական հարցին մոտեցումը պայմանավորված էր զուտ ազդեցության գոտիներ ձեռք բերելու շահագրգռվածությամբ, ապա 1917 թ. հոկտեմբերից հետո, երբ աշխարհը բաժանվեց երկու հակադիր ճամբարների, դրան ռամարվեր նաև հարցի լուծման քաղաքական կողմը։ Հայկական հարցի լուծումը նոր լաբիրինթոսի մեջ մտավ։

Իրադարձությունների հայտնի շրջադարձերից հետո 1917 թ. նոյեմբերին Անդրկովկասը անջատվեց Ռուսաստանից, իսկ 1918 թ. գարնանը հանդես եկան Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի անկախ հանրապետությունները։ Այս շրջանում Խորհրդային Ռուսաստանի բացասական Անդրկով-

կասի հանրապետությունների նկատմամբ և վերջիններիս քաղաքականությունը Ռուսաստանի նկատմամբ շնչված առճակատման բնույթ էին կրում։

Փոխվեց նաև արևմտյան տերությունների քաղաքականությունն Անդրկովկասում։ Եթե Խորհրդային Ռուսաստանը ձգտում էր, հենվելով հեղափոխական ուժերի վրա, օր առաջ իրականացնել Անդրկովկասի հանրապետությունների խորհրդայնացումը, ապա Արևմտյան տերություններն ամեն կերպ ձգտում էին սատար կանգնել աղգային ուժերին՝ պահպանելու այդ հանրապետությունների անկախությունը և նրանց մղելու Ռուսաստանի դեմ։ Կարևորվում էր վերջին հանգամանքը։

Փարիզի խաղաղության կոնֆերանսում, որն իր աշխատանքներն սկսեց 1918 թ. դեկտեմբերին, Ռուսական հարցը, որի մասն էր կազմում նաև Հայկական հարցը, դարձավ կոնֆերանսի մասնակիցների ուշադրության կենտրոնական հարցերից մեկը։

Թուրքիայի բաժանմանը և Ռուսաստանում խորհրդային իշխանության տապալմանը ձգտող եվրոպական երկրների քաղաքականությունը Խորհրդային Ռուսաստանին և 1919 թ. Անատոլիայում քաղաքական ուժ դարձած ռեմալական Թուրքիային մղեց փոխադարձ շահերի պաշտպանությանը նպատակամղված դաշինքի։

Մինչ այդ՝ 1917 թ. դեկտեմբերի 30-ին Խորհրդային Ռուսաստանը Բրեստ-Լիտովսկի բանակցությունների ժամանակ հանդես էր գալիս «Թուրքահայաստանի» աղատ ինքնորոշման համար անհրաժեշտ երաշխիքներ ստեղծելու պահանջով[2]։ Այդ պահանջներն ամփոփված էին «Թուրքահայաստանի» մասին» Խորհրդային Ռուսաստանի Ժողկոմխորհի՝ 1917 թ. դեկտեմբերի 29-ին ընդունած դեկրետում, որտեղ խորհրդային կառավարությունը հայտարարում էր, թե «պաշտպանում է Ռուսաստանի կողմից օկուպացված «Թուրքահայաստանի» հայերի աղատ ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև լիակատար անկախություն»[3]։

Նախատեսվում էր Արևմտյան Հայաստանից թուրքական զորքերի դուրս բերումը։

«Թուրքահայաստանի» մասին» Ռուսաստանի Ժողկոմխորհի դեկրետին ԱՄՆ-ի պրեզիդենտ Վ. Վիլսոնը հակադրեց «ծովից-ծով Հայաստանի» իր գլանը։

Այսպիսով, Խորհրդային Ռուսաստանը հանդես էր գալիս Արևմտյան Հայաստանի լիակատար անկախության պահանջով, չկոնկրետացնելով նրա սահմանները, իսկ Վ. Վիլսոնը հանդես էր գալիս «Մեծ Հայաստան» ստեղծելու գլանով, որի սահմանները ևս պետք է որոշվեին հետագայում։

Քաղաքական այս հարցադրումներում և՛ Խորհրդային Ռուսաստանը, և՛ ԱՄՆ-ը հանդես էին գալիս նախ և առաջ տարածաշրջանում իրենց շահերի պաշտպանության մղումով։ Հայկական հարցը այս շրջանում ևս խոշոր տերությունների քաղաքական կոմբինացիաների առարկա էր մնում։ Փոխվում էին քաղաքական ուժերի հարաբերակցությունները, փոխվում էր նաև շահագրգռված տերությունների վերաբերմունքը Հայկական հարցի նկատմամբ։ Քաղաքական այս վայրիվերումները ցցուն դրսևորվում էին հատկապես Փարիզի խաղաղության կոնֆերանսում, Հայաստանի նկատմամբ այդ կոնֆերանսում և ԱՄՆ-ի կոնգրեսում Հայկական հարցի քննարկման ժամանակ, Անդրկովկասում ծավալվող իրադարձությունների ազդեցության տակ Խորհրդային Ռուսաստանի քաղաքական կողմնորոշումներում։

Հայկական հարցի նկատմամբ մեծ տերությունների քաղաքական մոտեցումներում որոշակի փոփոխություններ կատարվեցին, երբ 1920 թ. նոյեմ-

---

2 Տե՛ս Документы внешней политики СССР (ДВП СССР), т. I, М., 1959, с. 78.

3 Образование СССР (Сб. документов, М., 1949, с. 27—28).

բերի 29-ին Հայաստանում հաստատվեցին խորհրդային կարգեր։ Այս իրադարձության ժամանակագրությունն իր հետին արդեն ազդել էր Խորհրդային Ռուսաստանի վարած քաղաքականության վրա։ Մինչ այդ (1920 թ. ապրիլի 28-ին) խորհրդային կարգեր էին հաստատվել Ադրբեջանում, ինչը որոշակի տրամադրվածություն էր ստեղծել Խորհրդային Ռուսաստանում՝ տարածքային հարցերը հայ-ադրբեջանական և հայ-թուրքական հակամարտություններում լուծելու հօգուտ Խորհրդային Ադրբեջանի և քեմալական Թուրքիայի։

Քեմալական Թուրքիան ևս անմասն չէր մնացել քաղաքական այս նոր ուղեգծի իրագործման հարցում։ Հայաստանի Հանրապետության տապալման և Հայաստանում խորհրդային կարգեր հաստատելու գործում որոշակի էր Թուրքիայի դերը։ Հայաստանի Հանրապետության դեմ 1920 թ. աշնանը սանձազերծած պատերազմը, Հայաստանի տարածքների մի զգալի մասի զավթումը իր դերը կատարեց։

Այսպիսով, առանց վերը շարադրված գործոնները հաշվի առնելու, անհնար է ճիշտ պատկերացում կազմել Հայկական հարցում մեծ տերությունների վարած քաղաքականության մասին։

Այժմ անդրադառնանք 1918—1920 թթ. Հայկական հարցի լուծմանն առնչվող և սկզբունքային նշանակություն ունեցող մի քանի հարցերի շարադրմանը, որոնք առավել կոնկրետ են արտացոլում միջազգային դիվանագիտության և մեծ տերությունների վարած քաղաքականությունը Հայկական հարցում։

Պատերազմի տարիներին Թուրքիայում հայերի զանգվածային կոտորածները առանձնապես մեծ ցավ չպատճառեցին մեծ տերություններին։ Նրանցից և ոչ մեկը գործնական քայլերի չդիմեց այդ կոտորածները և Արևմտյան Հայաստանից հայերի բռնագաղթը կանխելու համար։ Այս հանգամանքը քիչ դեր չխաղաց հետագայում Թուրք պատմաբանների կողմից հայերի ցեղասպանության՝ պետական մակարդակի բարձրացրած քաղաքականության կեղծման համար։

Ռուսաստանի դուրս գալը պատերազմից և Ռուսաստանին նորից պատերազմի մեջ ներքաշելու՝ արևմտյան տերությունների քաղաքականությունը հակատարրական նշանակություն ունեցավ հայերի համար։

Բրեստ-Լիտովսկի բանակցությունների ընթացքում գերմանական բլոկն իր կամքն էր թելադրում Ռուսաստանին։ Գերմանական բլոկը ձգտում էր մասնատել Ռուսաստանը և բռնազավթել նրա տարածքների մի զգալի մասը՝ 160 հազար քառ. կմ։ Ռուսաստանի կառավարության 1917 թ. դեկտեմբերի 17(30)-ի դիմումը դաշնակից տերություններին՝ մասնակցելու բանակցություններին, որպեսզի նրանք կարողանային ղեկ մնալ Ռուսաստանի և թշնամական երկրների միջև կնքվող անջատ հաշտությունից բխող հնարավոր վնասներից, մերժվեց[4]։

Օգտվելով դրանից և Անդրկովկասյան անմիաբան Սեյմի անկարողությունից, 1918 թ. Թուրքերն անկաշկանդ շարժվում էին դեպի երկրամասի խորքերը։ Արևմտյան Հայաստանի անկախության ձեռք բերման մասին այլևս խոսք չէր կարող լինել։ Թուրքական բանակը գրավեց Էրզրումը, Սարիղամիշը, Արդահանը, Կարսը, Ալեքսանդրապոլը, Բաթումը և սկսեց շարժվել դեպի Երևան և Բաքու։ Թուրքերը կոտորեցին ավելի քան 70 հազար հայ, աբրեվարելով և Թուրքիայի խորքերը քշելով ևս հարյուրավոր ու հազարավոր հայերի[5]։ Հայ ժողովրդի զանգվածային բնաջնջման, նշված վայրերի բռնազավթման դեմ Խորհրդային Ռուսաստանի բողոքները Գերմանիային և Թուրքիային, մնացին անհետևանք[6]։ Թուրքիայի ներխուժումը Անդրկովկաս ծայր

---

[4] ДВП СССР, т. I, с. 67.
[5] А. Р. Юсупов, Стамбул, М., 1970, с. 116.
[6] ДВП СССР, т. I, с. 240—242, 667, 672.

աստիճանի սրեց ազգամիջյան հարաբերությունները երկրամասում։ Ծայր տան ազգամիջյան կոտորածները։

Այս պայմաններում, 1918 թ. ապրիլի 22-ին Թուրքիայի ճնշմամբ Անդրկովկասյան Սեյմը երկրամասը անկախ հայտարարեց Խորհրդային Ռուսաստանից։ Թուրքիան, օգտվելով դրանից, առավել հանդգնությամբ ձգտեց դրավել տվելի շատ տարածքներ, քան նրան զիջված էր Բրեստի պայմանագրով, հայտարարելով, որ չի խախտում այդ պայմանագիրը, քանի որ Անդրկովկասն իրեն անկախ է հայտարարել։ Թուրքիան պլանավորել էր գրավել ամբողջ Անդրկովկասը։ Նրա զորքերի առաջխաղացումը կանխվեց հայ աշխարհազորայինների դիմադրության հետևանքով։ Ղարաքիլիսայի և Երևանից ոչ հեռու գտնվող Սարդարապատի տակ թուրքական զորքերը մեծ ջարդ կրեցին։ Սակայն 1918 թ. մայիսին Թուրքիայի և Անդրկովկասյան Սեյմի միջև ընթացող Բաթումի բանակցությունների հետևանքով վերը նշված քաղաքները և որոշ այլ տարածքներ՝ 1 մլն. 250 հազար բնակչությամբ անցան Թուրքիային։ Վերջինս ձգտում էր ստեղծել կովկասյան-թուրքական պետություն։

Ադրբեջանը և Վրաստանը, հենվելով Թուրքիայի և Գերմանիայի աջակցության վրա՝ հայտարարեցին իրենց անկախությունը, զավթելով Հայաստանի պատմական տարածքների մի զգալի մասը։ Այս պայմաններում մայիսի 28-ին հռչակվեց նաև Հայաստանի անկախությունը, որն ըստ էության Երևանի պատմական նահանգն իսկ ամբողջությամբ չէր ընդգրկում։ Հայաստանի տարածքը չէր անցնում 10 հազ. քառ. կմ-ից։ Սա հայ ժողովրդի երազած անկախությունը չէր, սակայն փաստ էր, որ իր պետականությունը դարերի խորքում կորցրած հայ ժողովուրդը Անդրկովկասում ծվարելու հնարավորություն ստացավ։ Հայաստանի Հանրապետության ստեղծումը սկիզբ հանդիսացավ հայոց պետականության վերականգնմանը։

1918 թ. սեպտեմբերի 13-ին թուրքական զորքերը մտան Բաքու։ Բաքվի կոմունան, Անդրկովկասում խորհրդային իշխանության այդ հենարանը, տապալվեց։ Օգոստոսի 4-ին Բաքվում գտնվող անգլիական զորքերը հեռացել էին քաղաքից։ Բայց դա երկար չտևեց։

Պատերազմում գերմանա-թուրքական բլոկի պարտությունից հետո, Անգլիայի ռազմական կաբինետը Իրաքում գտնվող իր զորքերին հրահանգ տվեց օկուպացնելու Բաքուն և մոտակայքում ընկած նավթային շրջանները։ Դա Խորհրդային Ռուսաստանի դեմ գործելու ընդարձակ պլանի մի մասն էր (ազդում[7]։ Նոյեմբերի կեսին անգլիական զորքերը գեներալ Վ. Թոմսոնի հրամանատարությամբ դաշնակիցների անունից օկուպացրին Անդրկովկասը։

Անդրկովկասում Անտանտի երկրների և հատկապես Անգլիայի կառավարությունների վարած քաղաքականության մասին մանրամասն տեղեկություններ են պարունակվում անգլերեն հրատարակված մի շարք աշխատություններում։ Նշենք միայն, որ Լլոյդ Ջորջի, Քերզոնի, Սեսիլի, Բալֆուրի և բարձրաստիճան այլ գործիչների միջև ընդհանուր համաձայնություն չկար Անդրկովկասում կիրառվելիք քաղաքականության նկատմամբ, չնայած նրանք բոլորն էլ շահագրգռվածություն էին հանդես բերում Անդրկովկասը Անգլիայի ազդեցության գոտում պահելու համար։

Այդ տրամադրությունները խտացած արտահայտություն գտան „Financial News"-ի 1918 թ. դեկտեմբերի 24-ի համարի էջերում, որտեղ ասվում էր, թե «Բրիտանական կղզիների պատմությունը երբեք մեզ չի տվել այսպիսի բարեհաջող դեպք՝ բրիտանական ազդեցության և բրիտանական առևտրի խաղաղ ծավալման համար, երկրորդ Հնդկաստան կամ երկրորդ Եգիպտոս ստեղծելու համար»։

Իսկ երբ հարց էր ծագում, թե Անդրկովկասից հեռանալու դեպքում ո՞ւմ զիջել դիրքերը, գերապատվություն էր տրվում Ֆրանսիային կամ Իտալիային

---

[7] R. Ullman, Anglo-Soviet Relations. 1917—1921, vol. II, London, 1968, p. 10—15, 4[illegible], 50.

և ոչ երբեք Ռուսաստանին կամ ԱՄՆ-ին։ Այս հարցում ևս անգլիական կառավարող շրջաններում միասնական կարծիք չկար։

Անգլիական զորքերը չկարողացան իրագործել իրենց խոստացած խաղաղարարական ակնկալությունը։ Հայ-ադրբեջանական հակասությունները, հատկապես Ղարաբաղի հարցում, որտեղ 1919 թ. հունվարին անգլիական զորքերի հրամանատարությունն ստեղծել էր Ղարաբաղի ժամանակավոր գեներալ-նահանգապետություն, չդադարեցին և երբեմն-երբեմն հանգեցնում էին մուսավաթականների կազմակերպած հայերի ջարդերին։

Անդրկովկասում Անգլիայի դիրքերի ուժեղացումը որոշակի անհանգստություն առաջացրեց ամերիկյան կառավարող շրջաններում։ Մերձավոր ու Միջին արևելքում իրենց քաղաքական նպատակներին հասնելու գործում ամերիկյան դիվանագիտության հաշվարկներում առավել հիանկարային էր համարվում Հայկական հարցին «տեր կանգնելը»։ 1918 թ. դեկտեմբերի 10-ին սենատոր Հ. Լոջը կոնգրեսի քննարկմանը ներկայացրեց անկախ Հայաստան ստեղծելու բանաձև, որի կազմում ընդգրկվելու էին ոչ միայն «Թուրքահայաստանը» ու «Ռուսահայաստանը», այլև Կիլիկիան, Իրանական Ադրբեջանի հյուսիսային մարզերը և այլ տարածքներ, որոնց վրա ամբողջ Անդրկովկասի հետ միասին, պետք է տարածվեր ԱՄՆ-ի մանդատը։ 1919 թ. փետրվարի 15-ին այդ առաջարկը պաշտպանող նոր բանաձև ներկայացրեց սենատոր Վ. Ջինգը[8]։ Հայ ժողովուրդը երախտապարտ կլիներ ԱՄՆ-ի կոնգրեսին և հիշյալ սենատորներին, եթե կայուն երաշխիքներով ստեղծվեր այդպիսի մի Հայաստան։

Ոգևորված դաշնակիցների խոստումներով և այն հույսով, որ դաշնակիցների հաղթանակի համար հայերի թափած արյունը պետք է գնահատվի, Հայաստանի նորաստեղծ հանրապետությունը և արևմտահայերը իրենց պատվիրակություններն ուղարկեցին Փարիզ, որոնք, որոշ ժամանակ անց հանդես եկան որպես մեկ հայկական պատվիրակություն։

Փարիզում հայկական պատվիրակներն անջատ հանդիպումներ ունեցան տարբեր երկրների դիվանագիտական առանձին ներկայացուցիչների հետ։ Սակայն կոնֆերանսը Հայաստանի պատվիրակներին «չնկատեց»։ Բայց «չնկատելը» ևս քաղաքականություն էր և ուներ իր պատճառները։ Բանն այն է, որ դաշնակից տերությունները դեռևս չէին կորցրել հույսները Ռուսաստանի այն ուժերի նկատմամբ, որոնք ձգտում էին խորհրդային կարգերի տապալման միջոցով վերականգնել «մեծ ու անբաժան Ռուսաստանը»։ Ռուսական նախկին կայսրության փլատակների վրա ստեղծված հանրապետությունների կառավարություններին ճանաչելը և նրանց հետ հաշվի նստելը կարող էին խրտնեցնել այդ ուժերին։ Այդ պատճառով էլ աննպատակահարմար գտնվեց ազգային կառավարությունների ներկայացուցիչներին պաշտոնապես կոնֆերանս թողնելը։

1919 թ. ամռանը հայտնի դարձավ Անգլիայի կառավարության մտադրությունն իր զորքերն Անդրկովկասից դուրս հանելու մասին։ Դա Անգլիայի ներքին և արտաքին իրավիճակից պարտադրված քայլ էր, որը, սակայն, մեծ տագնապ առաջացրեց Հայաստանի կառավարող շրջաններում։ Կառավարությունը Փարիզում իր պատվիրակության դեկավար Ավետիս Ահարոնյանին հանձնարարեց դիմել անոյիակոն կառավարության ներկայացուցիչներին, թախանձագին խնդրելով հրաժարվել այդ քայլից։ Ահա թե ինչ է գրում իր կառավարությանը Ա. Ահարոնյանը՝ այդ հանձնարարության կատարման համար թափած իր ջանքերի մասին. «Երեք օր է,—գրում է նա,—ծեծում եմ բոլորի դռները, սեղմում եմ բոլորի ձեռքերը. որոնք կարող են որևէ օգնություն հասցնել մեզ... Հեռագրեցի Լոնդոն՝ Լլոյդ Ջորջին, մեզ բարեկամ բոլոր անգլիացիներին, համայնքների պալատի բոլոր անդամներին, անգլիա-

[8] Congressional Record, vol. 56, pt. 2, p. 11579; vol. 57, pt. 1, p. 237; pt. 4, p. 3414.

կան լիբերալիստական կուսակցության շեֆ Հենդերսոնին, եթե հնար է առժամապես անգլիական զորքերը չքաշել Կովկասից... հեռագրեցի Հռոմ՝ նախարարապետ Նիտտիին, և Ամերիկա՝ Վիլսոնին..., Բալֆուրին, Պիշոյին, Կլեմանսոյին...»։

Այս ջանքերը մնացին ապարդյուն։ Անգլիայում Ահարոնյանին խոստացան միայն «հնարավորիլ անգլիական բարձր հրամանատարությանը (Կովկասում—Դ. Դ.), որ եթե հնարավոր է, զենք և ռազմամթերք տան հայերին...»[9]։ Նրան տեղեկացրին նաև, որ Թուրքերի հնարավոր առաջխաղացման դեպքում հայերին ոչ մի օգնություն չի ցուցաբերվի։

Տագնապ էին ապրում նաև վրացիները, իսկ Ադրբեջանի քաղաքական ուժերը հրճվանքի մեջ էին. հնարավորություն էր ստեղծվում ստանալ Թուրքերի անմիջական օգնությունը։

1919 թ. հուլիսին սկսվեց Անդրկովկասից անգլիական զորքերի դուրսբերումը։ Այս հանգամանքը, ինչպես նաև Խորհրդային Ռուսաստանի զորքերի առաջխաղացումը դեպի հարավ, երկրամասում խորհրդային իշխանության համար մղվող պայքարի ակտիվացումը, Փարիզի կոնֆերանսին ստիպեց ավելի լուրջ վերաբերվել Հայկական հարցին, որը դիտվում էր որպես միջոց՝ Ռուսաստանի առաջխաղացումը կանխելու համար։ Կոնֆերանսի ուշադրությունը բևեռվեց ԱՄՆ-ի վրա. Լլոյդ Ջորջը դատում էր, որ ԱՄՆ-ը պետք է վերցնի Հայաստանի և ամբողջ Անդրկովկասի մանդատը, մինչև «Ռուսական հարցի» վերջնական կարգավորումը, այսինքն մինչև Խորհրդային Ռուսաստանի տապալումը։

Ֆրանսիան և Իտալիան գործնական քայլերի դիմեցին՝ Անդրկովկասը ձեռքից բաց չթողնելու համար։

Իտալիան 1919 թ. աշնանը գաղտնի պայմանագիր կնքեց Ադրբեջանի հետ՝ խոստանալով նրա նավթի դիմաց զենք մատակարարել։ Ֆրանսիան ձգտում էր իր մանդատը հաստատել Սիրիայի և Կիլիկիայի վրա։ Այդ նպատակով գաղտնի բանակցություններ սկսվեցին Թուրքիայի հետ։

Այդ օրերին Փարիզում անգլիական առաքելության քարտուղար Հ. Նիկոլսոնը, որին հանձնարարված էր կազմել Կ. Պոլսի և Հայաստանի մանդատները ԱՄՆ-ին հանձնելու որոշման նախագիծը, գրում է, որ երբ այդ առթիվ խոսակցություն ունեցավ Բալֆուրի հետ և նրա ուշադրությունը հրավիրեց հարցի բարոյական կողմի վրա, վերջինս պատասխանեց. «Իմ սիրելի երիտասարդ... այն ամենը, ինչի մասին դուք խոսում եք, մաքուր էսթետիկա է»։ Այդ տպավորության տակ Հ. Նիկոլսոնն իր հուշերում գրում է. «Պետական փորձառու գործիչները ընդունակ չեն ամաչելու անբարոյական արարքներից, եթե դրանք նույնիսկ բոլորովին էլ անհրաժեշտություն չեն»[10]։

1919 թ. հուլիսի 5-ին ամերիկյան բանակի գեներալ Հասկելը նշանակվեց գերագույն կոմիսար Հայաստանում։ Օգոստոսին ԱՄՆ-ի պրեզիդենտ Վ. Վիլսոնը Մերձավոր արևելքում հայկական մանդատի հետ առնչվող հարցերի ուսումնասիրության համար ստեղծեց «Ամերիկյան ռազմական առաքելություն»՝ գեներալ Հարբորդի գլխավորությամբ, իսկ սեպտեմբերի 8-ին կոնգրեսը որոշում ընդունեց «օգնել Հայաստանին՝ ստեղծելու անկախ հանրապետություն»։

1919 թ. աշնանը դաշնակիցների շրջանում լուրջ քննարկման դրվեց Անդրկովկասի հանրապետությունների դե ֆակտո ճանաչման հարցը։ Մոտեցումը միանշանակ չէր։ Ոմանք գտնում էին, որ «առաջնակարգ անհրաժեշտություն է» այդ ճանաչումը (Անդրկովկասում անգլիական կոմիսար գեներալ Ուորթրոպ և ուրիշներ), իսկ ոմանք (գեներալներ Կորի, Հարբորդ և ուրիշներ), թե «նրանց ճանաչելը վաղ է»։

---

[9] Տեղակալ Մ. Ավետիսյան, Հայ ազատագրական ազգային հիմնադիր (1870—1920) հոշմատյան և զրույցներ Անդրանիկը, Փարիզ, 1954, էջ 228—229։

[10] Г. Никольсон. Как делился мир в 1919 году, М., 1945, с. 257, 259.

Փարիզի կոնֆերանսի մասնակիցները տենդագին քննարկում էին Հայաստան զորքեր ուղարկելու անհրաժեշտության հարցը։ 1920 թ. հունվարի 10-ին Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի պրեմիեր-մինիստրներն ու արտաքին գործերի մինիստրները ԱՄՆ-ի և Ճապոնիայի դեսպանների ներկայությամբ, քննարկելով Անդրկովկասում վարվելիք քաղաքականության հարցը, հանձնարարեցին արտաքին գործերի նախարարներին՝ իրենց կառավարությունների անունից հայտարարելու Ադրբեջանի և Վրաստանի կառավարությունների դե ֆակտո ճանաչումը։

Հայաստանի Հանրապետության ճանաչումը կախման մեջ էր թողնվում Թուրքիայի հետ կնքվելիք խաղաղության պայմանագրից։ Խոսքը Սևրի պայմանագրի մասին էր։

Լորդ Քերզոնն առաջ էր քաշում անգլիական զորքերը Բաթումում պահելու, Անդրկովկասում ռազմական նշանակություն ունեցող երկաթուղային ճանապարհներն օգտագործելու և Բաքուն բոլշևիկներից պաշտպանելու միջոցառումների հարցը։ Ֆելդմարշալ Հ. Վիլսոնը, ինչպես գրում է Ռ. Ուլմենը, ռազմական միջոցներով բոլշևիկների առաջխաղացումը կանխելու Քերզոնի այս ճիգերը համարում էր «ծիծաղելի»։ «Բացարձակապես պարզ է,—գրում էր Հ. Վիլսոնը իր օրագրում,—որ Վրաստանը և Ադրբեջանը դառնում են բոլշևիկյան, չնայած այս հիմարները (դաշնակիցները—Գ.Գ.) միայն երեկ Փարիզում համաձայնեցին ճանաչել այդ երկրների կառավարությունները...»։

Քերզոնը, անգլիական կառավարության՝ հունվարի 16-ից 19-ը տեղի ունեցած նիստերում, պնդում էր, պահանջում էր՝ Պարսկաստանը բոլշևիկներից պաշտպանելու նպատակով «կազմակերպել Անդրկովկասում գերազանց պաշտպանության գիծ»։ Ու. Չերչիլն իր հերթին նշելով, որ «դրությունը տագնապալից է», առաջարկում էր բոլոր հնարավոր միջոցներն օգտագործել՝ բոլշևիզմի դեմ պայքարելու համար։ Լլոյդ Ջորջը ընդգծում էր, որ բոլշևիզմը աշխարհին վտանգ էր սպառնում ոչ այնքան ռազմական տեսակետից, որքան քաղաքական։ Այդ պատճառով էլ նա անիմաստ էր համարում զինված ուժերի ուղարկումը[11]։

Դրությունը բարդանում էր նրանով, որ Անդրկովկասի հանրապետությունները միանշանակ վերաբերմունք չունեին գեներալ Դենիկինի քաղաքական հրաժարների նկատմամբ, որին օգնում էին դաշնակիցները։ «Անբաժան» Ռուսաստանի գաղափարը անընդունելի էր անդրկովկասյան հանրապետությունների համար, ինչը կաշկանդում էր դաշնակիցների համարձակ գործողությունները Անդրկովկասում։ Այդ նույն նկատառումներով դաշնակիցները չճանաչեցին «Հյուսիսային Կովկասի հանրապետությունը», համարելով այն Դենիկինին պատկանող տարածք[12]։

1920 թ. ապրիլին Սան Ռեմոյում դաշնակիցների գերագույն խորհուրդը հաշվի առնելով ԱՄՆ-ի տրամադրությունները՝ հրաժարվելու Հայաստանի մանդատից, որոշում ընդունեց Հայաստանի մանդատը Ազգերի լիգային հանձնելու մասին, սակայն չերաշխավորվեց այդ նպատակով նրան վարկեր տրամադրելը, որի պատճառով Ազգերի լիգան առաջարկը մերժեց։

Այս շրջանում Հայկական հարցի բախտը կախված էր Սևրի պայմանագրից։ Դաշնակիցների նախատեսած Հայաստանը, որի մասին երազում էին հայերը, իրական չէր կարող դառնալ։ Տասնամյակներ տևած ջարդերի ու կոտորածների հետևանքով Արևմտյան Հայաստանը հայաթափ էր եղել, իսկ նոր-նոր ոտքի կանգնող Հայաստանի Հանրապետությունը չուներ այն ռազմական ուժը, որով հնարավոր լիներ ապահովել գոնե սահմանների պաշտպանությունը։ Իսկ հանուն Հայաստանի՝ Թուրքիայի դեմ պատերազմելու դաշնակիցներից պահանջելու էին մարդկային և նյութական մեծ ռեսուրսներ։ Ենթադրվում էր, որ ստեղծվող Հայաստանի պաշտպանության համար

[11] R. Ulman. Նշվ. աշխ., էջ 323—324, 331—334.
[12] Public Record Office (London), F. O. 371/4931, p. 117—120, 132 (PRO).

կպահանջվեր այնտեղ ուղարկել առնվազն 27 դիվիզիա, բաղկացած ավելի քան 400 հազար զինվորից։

Սերի պայմանագիրը, որը ստորագրվեց 1920 թ. օգոստոսի 10-ին, հայտնի է բոլորին և նրա մանրամասներին անդրադառնալն ավելորդ է։ Նշենք միայն, որ այն ստորագրվել էր իշխանությունից փաստորեն զուրկ սուլթանի կառավարության հետ, չնայած 1919 թ. սեպտեմբերին Սվասում տեղի ունեցած համաթուրքական առաջին ազգային կոնգրեսը Կ. Պոլսի կառավարությանն արգելել էր հաշտություն կնքել դաշնակիցների հետ։ Սերի պայմանագրի ստորագրումը ազգայնական պոռթկում առաջացրեց Թուրքիայում և ընդհանրապես՝ համար «բարոյականն» ազդակ դարձավ՝ նոր ուժով դիմելու հայ ժողովրդի ոչնչացման հին քաղաքականությանը։

1920 թ. սեպտեմբերի վերջերին Թուրքիան ներխուժեց Հայաստան, նոր ավերումներ ու կոտորածներ պատճառելով հայ ժողովրդին։

Հայաստանի Հանրապետության կառավարությունը շարունակում էր հավատալ, որ դաշնակից պետությունները Հայաստանին կօգնեն դիմադրավելու թուրքերի հարձակմանը։ Այդ իսկ պատճառով նա մերժում էր Խորհրդային Ռուսաստանի առաջարկը՝ հանդես գալու միջնորդի դերում հայերի և թուրքերի միջև։

Անդրկովկասում Անգլիայի ներկայացուցիչ Ստոքսի հետ 1920 թ. հոկտեմբերի 11-ին ունեցած հանդիպման ժամանակ Հայաստանի Հանրապետության կառավարության նախագահ Հ. Օհանջանյանը հայտարարել է. «Իմ կառավարությունը, ինչպես դուք դիտեք, մերժել է միանալ բոլշևիկներին, հուսալով դաշնակիցների անհապաղ օգնությունը»[13].

Հայաստանի դիմումները Անգլիայի և դաշնակից մյուս տերությունների կառավարություններին մնում էին անհետևանք, իսկ թուրքական զորքերը նորանոր տարածքներ էին գրավում։ Նոյեմբերի վերջերին Լոնդոնում հաղորդագրություն է ստացվում, որ կնքվել է «անգլո-թուրքական պայմանագիր Բաքվի և Հայաստանի վերաբերյալ» և որ Մ. Քեմալը վերահսկում է Անատոլիայում բոլշևիզմի վտանգից[14]։ „Public Record office"-ում գտնվող այդ փաստաթղթում ոչինչ չի ասվում այդ պայմանագրի հոդվածների մասին։ Սակայն փաստ է, որ այդ ժամանակ տեղի էր ունենում մերձեցում քեմալական Թուրքիայի և Անգլիայի միջև։

Օթե հավատալու լինենք Մոսկվայում հավատարմագրված ֆրանսիական լրագրող Լ. Բրիանի՝ իր կառավարությանը նոյեմբերի 21-ին ուղարկած տեղեկատվությանը, այդ պայմանագիրն ուղղված է եղել Հայաստանի դեմ։ Այդ փաստաթղթում, որը ևս գտնվում է „Public Record office"-ում, ասվում է. «Պաշտոնական անձանց հետ ունեցած զրույցներից Ձեր թղթակցին հայտնի է դարձել, որ անգլիացիները համաձայնության են եկել Քեմալի հետ, որպեսզի նա օկուպացնի Բաքուն՝ հետագայում այն բրիտանական կառավարությանը հանձնելու համար։ Որպես փոխհատուցում Անգլիան զոհաբերելու է Հայաստանը»[15]։

Այդ պայմանագրի մասին լուր էր ստացել նաև Երևանում անգլիական ներկայացուցիչներից մեկը՝ Հ. Հարկուրթը, որը նոյեմբերի 15-ին հաղորդել է Լոնդոն, թե «հույս ունեմ, որ այդպիսի անբարոյական քաղաքականությունը իսկապես մերը չէ, որովհետև այդ կնշանակեր ամբողջ Անդրկովկասը հանձնել վայրենության, իսկ Հայաստանը՝ ոչնչացման»[16]։

Անգլո-թուրքական պայմանագիրը ժամանակին մեծ աղմուկ է հանել նաև հայկական խորհրդարանում, որտեղ հրապարակված դեկլարացիայում

---

[13] PRO, F. O. 371/4963, p. 33.
[14] PRO, F. O. 371/4948, p. 130, 131.
[15] PRO, F. O. 371/4964, p. 87.
[16] PRO, F. O. 371/4966, p. 73.

Անգլիան մեղադրվել է այն բանում, որ «քեմալականների առաջխաղացումը Անդրկովկաս կատարվել է [illegible] Հետ կնքված պայմանագրի համաձայն, որի նպատակն է օգնել [illegible] հակահեղափոխությանը՝ Անդրկովկասից կոմունիստներին դուրս մղելու նրա ջանքերում»[17]։

Այժմ տեսնենք, թե ինչ դեր է կատարել Խորհրդային Ռուսաստանը հայ-թուրքական հարաբերություններում, որը ևս սուր վիճաբանությունների առարկա է պատմաբանների միջև։

1920 թ. ապրիլի 26-ին Թուրքիայի Ազգային մեծ ժողովն ուղերձով դիմեց Վ. Ի. Լենինին, որտեղ ասվում էր. «Մենք պարտավորություն ենք ստանձնում մեր ամբողջ աշխատանքները և ռազմական բոլոր գործողությունները միացնել իմպերիալիստական կառավարությունների դեմ պայքարի նպատակ ունեցող ռուսական բոլշևիկների հետ։

Եթե խորհրդային ուժերը նախատեսում են ռազմական գործողություններ բացել Վրաստանի դեմ... թուրքական կառավարությունն իր վրա է վերցնում իմպերիալիստական Հայաստանի դեմ ռազմական գործողությունները և պարտավորվում է ստիպել Ադրբեջանին մտնել խորհրդային պետությունների շրջանակը...

Մենք խնդրում ենք Խորհրդային Ռուսաստանին, որպես առաջին օգնություն մեզ տալ 5 մլն. թուրքական լիրա ոսկով, զենք և մարտական հանդերձանք, այն քանակով, որը կորոշվի բանակցությունների ընթացքում...»[18]։

Հայաստանի նկատմամբ քեմալական Թուրքիայի հետագա ամբողջ քաղաքականությունը խարսխված էր ստրատեգիական այս պլանների իրագործման վրա՝ հետամտելով Հայաստանը վերջնականապես աշխարհի քարտեզի վրայից վերացնելուն։ Այդ քաղաքականությունը բխում էր Թուրքիայի անկախության հռչակագրից, որը հայտնի է որպես Ազգային ուխտ և պառլամենտի կողմից ընդունվել էր Ստամբուլում՝ 1920 թ. հունվարի 28-ին։ Վերջինս ցրվեց մարտի 16-ին Անտանտի (Անգլիայի) զորքերի կողմից Ստամբուլն օկուպացնելուց հետո։ Մ. Քեմալի ջանքերով ստեղծվեց օսմանյան սահմանադրությամբ չնախատեսված նոր խորհրդարան, որն իրեն հռչակեց Թուրքիայի Ազգային մեծ ժողով։ Սուլթանի օրինական կառավարության կողքին Անկարայում ստեղծվեց Մ. Քեմալի գլխավորած կառավարությունը, որը փաստական իշխանությունը վերցրեց իր ձեռքը։

Այս շրջանում Անդրկովկասում Ռուսաստանի վարած քաղաքականությունն անըմբռնելի կլինի առանց դաշնակից տերությունների քաղաքականությունը հաշվի առնելու։

Ընդունված է այն տեսակետը, թե Առաջին համաշխարհային պատերազմից Թուրքիան դուրս եկավ պարտված։ Դա, վերջին հաշվով, ճիշտ չէ։ Համաշխարհային պատմությանը հայտնի չէ այլ դեպք, երբ պատերազմի դաշտում պարտություն կրած երկիրը երկու-երեք տարիների ընթացքում կարողացած լինի ոչ միայն վերականգնել իր նախապատերազմյան դիրքերը, այլև ձեռք բերել նոր տարածքներ։

Դա հետևանք էր խոշոր տերությունների միջև գոյություն ունեցած հակասությունների և հատկապես Ռուսաստանում խորհրդային կարգերի հաստատման։ Հայկական հարցն այդ հակասություններում օգտագործվում էր որպես մանրադրամ՝ փոխադարձ վճարումներ կատարելու համար։ Զիներ Հոկտեմբերյան հեղափոխությունը, գեպքերի զարգացումը բոլորովին այլ ընթացք կունենար։

1920 թ. ապրիլի 20-ին դաշնակիցների՝ Սան Ռեմոյում տեղի ունեցած Գերագույն խորհրդի նիստում Լլոյդ Ջորջը մի կողմից նշում էր, որ «Թուրքիան պետք է խեղդամահ արվի իր մայրաքաղաքում և ծովափնյա նավա-

---

[17] PRO. F. O. 371/4964 p. 80.

[18] Архив внешней политики СССР (АВП СССР), Ф. Рефература по Турции, оп. 3, д. 3, папка 2, л. 4.

հանդիսաններում», իսկ մյուս կողմից պնդում, թե «հայերը պետք է զինվեն և հնարավորություն ստանան անձամբ գործելու... Դաշնակից կառավարություններից և ոչ մեկը պատրաստ չի լինի օգնելու նրանց անգամ մեկ գումարտակով»։ Լլոյդ Ջորջը միաժամանակ հասկանում էր, որ «անհնարին է փորձել նոր Հայաստան կառուցել թղթի վրա»[19], առանց նրան աջակցելու։

Մինչ դաշնակիցները Սան-Ռեմոյում իրենց պլաններն էին մշակում, Անդրկովկասում իրադրությունը ոչ թե օր առ օր, այլ ժամ առ ժամ փոխվում էր։ Ապրիլի 28-ին Ադրբեջանում քեմալականների «համախոհների խմբի օժանդակությամբ»[20], ինչպես վկայում է Խորհրդային Ռուսաստանի արտգործժողկոմ Գ. Չիչերինը, տեղի ունեցավ խորհրդային հեղաշրջում։

Ադրբեջանի նորաստեղծ կառավարության առաջին քայլը եղավ պահանջել Հայաստանի կառավարությունից՝ իր զորքերը դուրս բերելու «Ադրբեջանի տարածքներից»[21]։ Խոսքը բուն հայկական տարածքների՝ Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի մասին էր։ Բոլշևիկյան Ադրբեջանը շարունակում էր մուսավաթական Ադրբեջանի քաղաքականությունը։

Ռուսաստանի խորհուրդների VIII համագումարում Գ. Չիչերինը նշեց, որ Ադրբեջանի խորհրդայնացումից հետո «նախկին սահմանային վեճերը հարևան հանրապետությունների հետ է՛լ ավելի բարդացան կարգերի հակադրությամբ... Զանգեզուրում, Ղարաբաղում, Նախիջևանի օկրուգում, Շարուր-Դարալագյազի գավառում ազգային պայքարը հայերի և մահմեդականների միջև բարդացավ նաև համաշխարհային պայքարով, որ մղվում էր Անտանտի իմպերիալիստների, որի առաջադիրքը (ֆորպոստը) դաշնակցականներն են դարձել, և խորհրդային աշխարհի միջև՝ իր առաջադիրք Ադրբեջանով»[22]։

Հայկական հարցի լուծման հնարավորները կանխորոշվեցին։ Խոշոր տերությունների հակասությունների լուծման մանրադրամից այն վերածվեց երկու հակադիր աշխարհների առճակատման առարկայի։

Հայաստանի համար ստեղծված վիճակն այսպես էր նկարագրում Ստամբուլում ամերիկյան դիվանագետներից մեկը՝ Բրիստոլը. «Հայաստանը և Ադրբեջանը պատերազմական դրության մեջ են։ Ադրբեջանը դաշինքի մեջ է Թուրքիայի հետ։ Հայաստանը գտնվում է նրանց արանքում և անհուսալի վիճակում է... Թուրքերը սպառնում են հարավից»[23]։

Մայիսի առաջին օրերին Հայաստանում հակակառավարական ապստամբություն ծագեց։ Դաշնակից երկրների առաքելությունները փախան Հայաստանից։

Մայիսի 4-ին Հայաստանի կառավարությունը դիմեց Գ. Չիչերինին և Վ. Լենինին՝ «Հայաստանի Հանրապետության անկախության և սուվերենության ճանաչման հիման վրա պայմանագիր կնքելու» Ռուսաստանի հետ[24]։ Մայիսի 17-ին Գ. Չիչերինը հայտնեց իր կառավարության համաձայնությունը։

Հուլիսի 19-ին Մոսկվա էր ժամանել թուրքական պատվիրակությունը՝ Բեքիր Սամի բեյի գլխավորությամբ, իսկ մինչ այդ հայկական պատվիրակությունը՝ Լ. Շանթի գլխավորությամբ։ Մոսկվայում միաժամանակ տեղի էին ունենում ռուս-թուրքական և ռուս-հայկական բանակցություններ։

Թուրքերը ձգտում էին հասնել Բրեստի 1918 թ. պայմանագրի վերականգնմանը, իսկ հայերը՝ Ռուսաստանի համար «ընդունելի դարձնել տաճկահայ հողերի կցումը Հայաստանին»։

---

[19] DBFP, vol. VIII, p. 54–64.

[20] ДВП СССР, т. II, М., 1958, с. 725.

[21] PRO, F. O. 371/4435, p. 83. „The Times", May 5th, 1920.

[22] ДВП СССР, т. II, стр. 727—728.

[23] PRO, F. O. 371/4938, p. 224.

[24] АВП СССР, ф. 148, оп. 3, пор. 7, папка 2, л: 5.

Հայերը ձգտում էին ապացուցել, որ «տաճիկները, բոլշևիկների օգնությամբ բրենց անմիջական նպատակներին հասնելուց հետո, պետք է լքեն Ռուսաստանը և լեզու գտնեն համաձայնության (Անտանտի) պետությունների հետ»։ Թուրքերն իրենց հերթին փորձում էին ռուսներին համոզել, որ հայերը լծվել են Անտանտը կառքին և խանգարում են ռուս-թուրքական մերձեցմանը և անհրաժեշտ է նրանց մեկուսացնել։ Իսկ Ռուսաստանը ձգտում էր և՛ Հայաստանը, և՛ Թուրքիան կտրել Անտանտի պետություններից և անմիջնորդ կապի մեջ մտնել Թուրքիայի հետ, որին համարում էր Արևելքը հեղափոխականացնելու գործոն։

Ռուս-թուրքական բանակցությունները սկսվեցին հուլիսի 24-ին։ Օգոստոսի 24-ին պարաֆիրացվեց պայմանագրի նախագիծը, որից խիստ դժգոհ Բեքիր Սամի բեյը օգոստոսի 30-ին Մ. Քեմալին գրած նամակում խորհուրդ չտվեց այն ստորագրել։ Այսպիսով պայմանագրի այդ նախագիծը չվերածվեց պայմանագրի։ Չնայած դրան, որոշ պատմաբաններ հենվում են դրա վրա՝ որպես պայմանագրի և պնդում, որ հենց այդ պայմանագրի հիման վրա Թուրքերը սեպտեմբերի վերջերին հարձակվեցին Հայաստանի վրա։

Պայմանագրի այդ նախագիծը, որ Գ. Չիչերինը համարել է «Պայմանագրի հիմունքներ», չստորագրվեց, քանի որ չէր լուծում հայ-թուրքական սահմանների հարցը։ Ռուսաստանը համաձայն չէր ո՛չ Թուրքիայի և ոչ էլ Հայաստանի կառավարությունների տարածքային պահանջալանդությունների հետ։ Նա առաջ քաշեց սահմանագծի ռեկտիֆիկացիայի մի այնպիսի սկզբունք, որի դեպքում մուսուլմանական գերակշիռ բնակչությամբ հողերը կանցնեին Թուրքիային, իսկ այն հողերը, որտեղ մինչև 1914 թ. եղել էր հայկական մեծամասնություն, կանցնեին Հայաստանին։ Սակայն Բեքիր Սամի բեյը, ինչպես նշում է Գ. Չիչերինը, «Անկարա վերադառնալուն պես փորձեց... ազգային Թուրքիային տրամադրել Ռուսաստանի դեմ»[26]։

Անդրադառնալով այն հարցին, թե ով է եղել նախահարձակը հայ-թուրքական պատերազմում, Գ. Չիչերինը իրավունքի պատասխանատու է տալիս։ Մի կողմից նշելով, որ «Թուրքական կառավարությունը որոշեց սրով կտրել գորդյան հանգույցը», մյուս կողմից նա ավելացնում է, թե «դաշնակները, հարձակվելով Թուրքերի վրա, իրենք առիթ տվեցին դրա համար»[27]։

Հարց է ծագում, ո՞րն էր այդ «առիթը»։ Այդ «առիթը» Հայաստանի հանրապետության անդիջում տրամադրվածությունն էր պահպանել իր անկախությունը և թույլ չտալ իրագործելու քեմալականների պլանները՝ «իմպերիալիստական Հայաստանի դեմ ռազմական գործողություններ» սկսելու, ինչը խոստացել էր Մ. Քեմալը Վ. Լենինին ուղարկած իր՝ ապրիլի 26-ի ուղերձում։ Այսպիսով, նման մեղադրանք կարելի է ներկայացնել ցանկացած ագրեսորի գլխին՝ ագրեսորին արդարացնելու համար։

Հիշեցնենք, որ Թուրքիան Հայաստանի վրա նախապատրաստվում էր հարձակվել դեռևս ամռանը, երբ փաստորեն պատերազմական վիճակի մեջ էր Հայաստանի հետ։

Հետաքրքիր է նկատել, որ երբ Թուրքերը ամռանը փաստորեն սկսել էին իրենց ագրեսիան Հայաստանի դեմ և գրավել Նախիջևանը, Վրաստանում Ռուսաստանի ներկայացուցիչ Ս. Կիրովը և Հայաստանում ներկայացուցիչ նշանակված Բ. Լեգրանը իրենց կառավարությանը խորհուրդ էին տալիս պահանջել Հայաստանից այդ պայմաններում միակողմանիորեն դադարեցնել ռազմական գործողությունները Հայաստան ներխուժած Թուրքերի դեմ։ Հուլիսի 28-ին Գ. Չիչերինը նրանց պատասխանում է. «Ստեղծված իրավիճակում և Թուրքերի սկսած հարձակման պայմաններում մենք չենք կարող, մանավանդ ռադիոյի միջոցով, պահանջել Հայաստանից միակողմանի դադարեցնել ռազմական գործողությունները»։

---

25 Հայրենիք, Բոստոն, 1954, № 5, էջ 9։

26 ДВП СССР, т. II, с. 726—728.

27 Նույն տեղում, էջ 727։

1920 թ. ամռանը հայ-ռուսական հարաբերությունները սրվեցին՝ ռուսական զորքերի կողմից հայ-ադրբեջանական վիճելի տարածքները օկուպացնելու պատճառով։ Ռուսաստանն իր այդ քայլը համարում էր ժամանակավոր, որի նպատակն էր «թաթարների և հայերի միջև ընդհարումներ թույլ չտալը»։ Դրությունն այնքան էր սրվել, որ հայերի դիմադրությունը կոտրելու նպատակով Կովկասում ռուսական 11-րդ բանակի հրամանատարությունը սպառնում էր «ոչնչացնել Արարատյան հանրապետությունը», եթե հայերը չդադարեցնեին իրենց դիմադրությունը։

Մինչև այսօր էլ չեն դադարում հայ-ադրբեջանական կոնֆլիկտները, որոնք իրենց արմատներով հասնում են այն ժամանակները, երբ հայոց բնիկ հողերը վիճելի հայտարարվեցին Ադրբեջանի ոտնձգությունների պատճառով, Ադրբեջանի Հանրապետության անօրինական ստեղծումից հետո։

Դեռևս 1920 թ. ապրիլի 27-ին Լոնդոնում հրատարակվող „The Times" թերթը սպառիչ պատասխան էր տվել այդ հարցին, ընդգծելով, որ «ոչ մի քարտեզում, նույնիսկ եթե այն Գերմանիայում է տպվել, դուք չեք գտնի Ադրբեջան կոչվող տարածք՝ Ռուսաստանի այն շրջանակներում, որոնք գոյություն ունեին մինչև 1917 թ. հեղափոխությունը և որ Ադրբեջանի Հանրապետությունն ստեղծվել է 1918 թվականին Գերմանիայի թելադրանքով և Թուրքերի միջոցով՝ «Ռուսաստանը Կովկասից դուրս վանելու իրենց ծրագրերի» իրագործման համար։

Չխորանալով մանրամասների մեջ, պետք է նշել, որ հայ-ռուսական բանակցությունների առաջին փուլում Ռուսաստանը կողմ էր արտահայտվում, որպեսզի Արևմտյան Հայաստանի այն տարածքները, որտեղ մինչև 1914 թ. հայերը մեծամասնություն էին կազմում, միացվեին Հայաստանին։

Ռուսաստանի գերագույն նպատակը Հայաստանում և Վրաստանում խորհրդային կարգերի հաստատումն էր։ Թուրքիան այդ ձգտումն իր նպատակներին ծառայեցնելու ակնկալիքով 1920 թ. ամռանը նախապատրաստվում էր ներխուժել Հայաստան։ Վտանգավոր համարելով այդ արկածախնդրությունը, Խորհրդային Ռուսաստանը կանխեց այն։ Մոսկվայում Խորհրդային Արբեջանի ներկայացուցիչ Շախ Թախթինսկին Վ. Լենինին հասցեագրած «հեպտեմբերի 20-ի նամակում գժգոհություն էր հայտնում, որ «Նախիջևանի երկրամասը զիջվել է Հայաստանին», որ Ռուսաստանն «արգելեց Թուրքերին հարձակվել դաշնակցականների վրա», ինչը «Թուրքերի վրա ճնշող տպավորություն» էր թողել։

Խորհրդային Ռուսաստանի այդ քայլի բացատրությունը մենք տեսնում ենք 1920 թ. հուլիսի 9-ին Վ. Լենինին Գ. Չիչերինի գրած նամակում. որտեղ մասնավորապես ասվում էր, թե հայ-ադրբեջանական «կոնֆլիկտի վերջին փուլը դա Ադրբեջանի կողմից պահանջների հայտարարությունն է մշտապես Հայաստանին պատկանող և փաստորեն Հայաստանի Հանրապետության ձեռքում գտնվող հսկայական մարզերի...»՝ Ղարաբաղի, Զանգեզուրի, Նախիջևանի, Օրդուբադի և Ջուլֆայի հետ միասին, Շարուր-Դարալագյազի նկատմամբ։ Չիչերինը կարծում էր, որ «հայերի դեմ թաթարական զորամասեր ուղարկելը բացարձակապես անընդունելի է և կլինի մեծագույն հանցագործություն»։

Ռուսաստանը չէր ձգտում արագորեն վերջակետ դնել հայ-ռուսական բանակցություններին։ Դա միջոց էր Թուրքիայի վրա որոշակի ճնշում գործադրելու համար։ Հայաստանը ևս շահագրգռվածություն հանդես չէր բերում այդ բանակցությունների շուտափույթ ավարտի նկատմամբ։ Նա սպասում էր Թուրքիայի հետ դաշնակիցների հաշտության պայմանագրի ստորագրմանը, մի պայմանագիր, որը Հայաստանին խոստանում էր «ծովից-ծով» սահմաններ։

Իսկ Թուրքիա՞ն։ Նա ևս շահագրգռված չէր ռուս-թուրքական բանակցությունների արագ ավարտով։ Թուրքիան ձգտում էր այդ բանակցություններն օգտագործել դաշնակից տերությունների դեմ, հասկացնելով նրանց, որ եթե չհրաժարվեն Թուրքիայի բաժանման պլաններից, ապա վերջինս

ստիպված կլինի վերվել բոլշևիկյան Ռուսաստանին, ինչը մահացու վտանգ կարող էր դառնալ Սերձավոր ու Միջին Արևելքում գտնվող անգլիացիների շահերի համար։

Հուլիսի վերջին օրերին հայ-ռուսական բանակցությունները փակուղի մտան՝ որուստեք անվերջանալի դիրք գրավելու պատճառով։ Կողմերի համաձայնությամբ որոշվեց բանակցությունները տեղափոխել Երևան։ Սակայն Հայաստանի կառավարությունը շարունակում էր հիմնականում հույսեր կապել դաշնակիցների հետ։ Սկզբում Լորդ Քերզոնը հայտարարում էր, թե Հայաստանին «զենք կտրվի, եթե նա շարունակի վարել իր անկախությունը պաշտպանելու հստակ կուրս»[28]։

Ընդհակառակը անգլիական գործակալների 1920 թ. հուլիսի 15-ի՝ Լոնդոն ուղարկված ընդարձակ զեկուցագրում վերլուծվում էր ստեղծված իրավիճակը և արվում հետևյալ եզրակացությունը. «Միայն Վրաստանին օգնելով մենք կարող ենք փրկել Հայաստանը կամ վերականգնել Ադրբեջանի անկախությունը և այդպիսով երաշխավորել մեր շահերը Պարսկաստանում»[29]։

Հայաստանի կառավարության բազմաթիվ դիմումները դաշնակից տերություններին և հատկապես Անգլիային՝ ռազմական օգնություն ստանալու խնդրանքով, ամբողջ 1919 թ. ընթացքում և մինչև 1920 թ. կեսը կամ մերժվել են կամ չնչին չափով են բավարարվել։ 1920 թ. մայիսի 15-ին Լ. Քերզոնին ուղարկած հերթական դիմումում Ավ. Ահարոնյանը արտնջում էր, թե «դժբախտաբար, մեր բոլոր դիմումներն առ այսօր անհետևանք են մնացել և մենք ռազմական ոչ մի տեսակի օգնություն չենք ստացել։ Եկել է ժամանակը,—ավելացնում է նա,—երբ հայ ազգը իրավունք ունի դիտենալ, թե ում վստահի իր ղեկավարության, օգնության, պաշտպանության, փրկության և արդարության գործը»[30]։

Հետաքրքիր է նկատել, որ երբ ընդամենը մեկ ամիս առաջ Հայաստանի կառավարությունն անգլիական կառավարությունից խնդրել էր բաց թողնել 500 հազար ֆունտ ստերլինգի ռազմական վարկ, այդ խնդրանքը քննարկվել է արտաքին գործերի և ռազմական գործերի նախարարություններում և մերժվել։ Պատասխանը եղել է այն, որ իրենք «չեն կարող գործել բիբլիական նախադեպով. «թող լինի Հայաստան» և բավարարվել զգուշացուցիչ հետևանքով, որ կա՛ Հայաստան»[31]։ Այս մերժումը նշանակում էր, թե Հայաստանին հենց այնպես օգնություն տալը թեթևամտություն կլիներ։

Անդրկովկասում իրադարձությունների փոփոխությունը ազդեց անգլիական գործիչների վրա։ Արդեն մայիսի 4-ին ռազմական գործերի նախարարությունը հայտնում էր լորդ Քերզոնին, որ «պնդում է Հայաստանին զենք տալու հարցը»[32]։ Դարձյալ մանրամասները բաց թողնելով, նշենք, որ մայիսի 24-ին Անգլիայի և Հայաստանի կառավարությունների միջև համաձայնություն է ձեռք բերվում Հայաստանին մեկ միլիոն ֆունտ ստերլինգի ռազմական վարկ բաց թողնելու մասին[33]։ Նույն օրը Անդրկովկասում բրիտանական գերագույն կոմիսար Լուկը ստանում է համապատասխան ցուցում։ Հունիսի 10-ին նա Ավ. Ահարոնյանին և Նուբար փաշային հանձնում է այդ գումարը՝ զենք գնելու համար[34]։ Դրվում էր նաև Վրաստանին ռազմական օգնություն կազմակերպելու խնդիրը։

Անդրկովկասում իրադրության փոխվելն ամերիկյան կոնգրեսում այլ ռեակցիա տվեց։ Երբ 1920 թ. մայիսի վերջին օրերին քննարկվում էր Հայ-

---

[28] PRO, F. O. 371/4937, p. 146.
[29] PRO, F. O. 371/4944, p. 138.
[30] PRO, F. O. 371/4956, p. 128—129.
[31] PRO, F. O. 371/4955, p. 70.
[32] PRO, F. O. 371/4936, p. 94.
[33] PRO, F. O. 371/4957, p. 20, 120.
[34] PRO, F. O. 371/4957, p. 173.

կական մանդատի հարցը և պրեզիդենտ Վիլսոնն առաջարկել էր այն ընդունել, սենատոր Լոմսոնը մտազբաղություն հայտնեց, որ «այդպիսի պայմաններում Հայաստանում ամերիկյան բանակի ներկայությունը կարող է առաջ բերել միայն զինված ընդհարում սովետների հետ»։ Սենատոր Սմիթն իր հերթին ավելացրեց, թե իր կարծիքով «10 հազար զինվոր բավական կլիներ» մանդատն իրագործելու համար, «բայց այժմ,—ասաց նա,—ես գրտնում եմ, որ նույնիսկ 100 հազար զինվորն էլ բավական չէ մեզ՝ Հայաստանում սեր անվտանգությունն ապահովելու համար»։ Նրա կարծիքով այդ նպատակի համար կպահանջվեր առնվազն 250 հազար զինվոր։

Կոնգրեսը հունիսի 1-ին հրաժարվեց Հայկական մանդատն ստանձնելուց, պատճառաբանելով, որ «այդ շրջանի ժողովուրդները հանձնվել են բոլշևիզմին»[35]։

Սոսկվայում ընդհատված հայ-ռուսական բանակցությունները շարունակվեցին Թիֆլիսում, որոնք հանգեցրին օգոստոսի 10-ի համաձայնագրի ստորագրմանը։ Դա փաստորեն զինադադարի համաձայնագիր էր, որով, սակայն, Ռուսաստանը չէր ճանաչում Հայաստանի անկախությունը։

Այդ նույն օրը ստորագրվեց նաև Սևրի հայտնի պայմանագիրը, որի 88-րդ հոդվածում ասվում էր, թե Թուրքիան ճանաչում է Հայաստանը, ինչպես այդ բանն արել են դաշնակից պետությունները, որպես «ազատ և անկախ պետություն»։ Սահմանագծման հանձնաժողովը ստեղծվելու էր երեք ասսվա ընթացքում։ Սևրի պայմանագրի ստորագրումը քեմալական Թուրքիային դրդեց որքան կարելի է շուտ հաշվեհարդար տեսնել Հայաստանի Հանրապետության հետ և խափանել «Մեծ Հայաստանի» վերստեղծումը։ Պատերազմը Հայաստանի դեմ դարձավ անխուսափելի։

Օգոստոսի 14-ին, մերժելով Սևրի պայմանագիրը, Մ. Քեմալը հրաման արձակեց իր զորքերին նախապատրաստվել հարձակման, նպատակ դնելով գրավել բոլոր այն տարածքները, որոնք Թուրքիային էին անցել Բրեստի 1918 թ. պայմանագրով։ Այս շրջանից ի վեր կարուկ շրջադարձ կատարվեց քեմալական Թուրքիայի և Հայաստանի նկատմամբ դաշնակիցների վերաբերմունքում։ Դաշնակից տերություններից յուրաքանչյուրը Սևրի պայմանագրի չեղյալ հայտարարելու գործում իր բացահայտ ու գաղտնի ծառայություններն էր առաջարկում Թուրքիային՝ նրանից զիջումներ կորզելու համար։

Այդ քաղաքականությունը զուգորդվում էր Թուրքիայի վրա ճնշումն ուժեղացնելու քաղաքականությամբ։ Պլաններ էին մշակվում ստեղծելու հայկական 40 հազարանոց բանակ, որը պետք է զինվեր դաշնակիցների ռազմական վարկերի հաշվին։ Անգլիան խոստանում էր նույնիսկ հայկական բանակի հրամանատարական կազմը համալրել անգլիական սպաներով։ Ընդ որում, յուրաքանչյուր սպայի համար Հայաստանի կառավարությունը պետք է վճարեր տարեկան 105 ֆունտ ստերլինգ, գումարած 10 %՝ «ծածկելու համար մահվան կամ հաշմանդամության համար պարգևատրման»[36] ծախսերը։

Այս պայմաններում տեղի է ունենում Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի հետագա մերձեցում։ Նախապատրաստվելով գրավել Սարիղամիշը և Շահթաղթին, թուրքերն այդ մասին տեղյակ են պահում Չիչերինին։ Օգոստոսի 22-ին Գ. Չիչերինը հայտնում էր Բ. Լեգրանին. «մենք հարցում արեցինք Օրջոնիկիձեին (նա կովկասյան բանակի ռազմահեղափոխական կոմիտեի անդամ էր—Գ. Գ.) Շահթաղթին և Սարիղամիշը մեզանից անկախ գրավելու թուրքերի ցանկության մասին։ Դա պայմանագրի (օգոստոսի 10-ի —Գ. Գ.) խախտում չի լինի, քանի որ մենք չենք պարտավորվել այդ վայրերը պաշտպանել թուրքերից»[37]։ Բ. Լեգրանը դեմ արտահայտվեց։ Օգոստոսի

---

[35] Congressional Record, vol. 59, pt. 8, pp. 7964—7970, 7889, pt. 7, p. 6978—69.

[36] PRO, F. O. 371/4958, p. 201.

[37] АВП СССР, ф. 0207, оп. I, пор. 7, папка I, л. 30, 31.

25-ին նա գրում էր Գ. Չիչերինին, որ «Թուրքերի գործողությունները կընկալվեն որպես մեզ հետ դաշնակցած ղորքերի գործողություններ և մենք, կամ թե ակամա, ստիպված կլինենք դրանց համար պատասխանատվություն կրել... Անհրաժեշտ է օգտագործել մեր ամբողջ ազդեցությունը Թուրքերին հանգստացնելու համար»[38]։

Այս առաջարկը չընդունվեց։ Ռուսաստանի կառավարությունն այն կարծիքին էր, որ Թուրքերի կողմից նշված վայրերի գրավումը կստիպեր Հայաստանին ընդունել Ռուսաստանի միջնորդությունը և լուծել Հայաստանի վրայով տրանզիտի հարցը՝ Թուրքերի հետ անմիջնորդ կապ հաստատելու համար։ Սա էր այն գլխավոր նպատակը, որին Ռուսաստանը ձգտում էր հայ-ռուսական բանակցությունների ամբողջ ընթացքում։

Երբ արդեն Թուրքերը ներխուժել էին Հայաստան, սեպտեմբերի 29-ին Ռուսաստանի կոմկուսի կենտկոմը որոշում ընդունեց «քեմալականներին փաստական օգնություն ցույց տալ դրամով և զենքով»։ Վ. Լենինը ուշացումով հասկացավ, որ Թուրքերի հարձակումն ուղղված էր նաև Ռուսաստանի դեմ։ 1920 թ. դեկտեմբերի 21-ի փակ ելույթում նա հայտարարեց. «Թուրքական հարձակումը մեր դեմ էր ուղղված...

Թուրքիան ղեկավարում են կադետները, օկտյաբրիստները, նացիոնալիստները, որոնք պատրաստ են մեզ ծախել Անտանտին»[39]։

Վերը շարադրված փաստերից շատերը պատմաբանների համար, այդ թվում և իմ, արխիվների փակ լինելու պատճառով անհայտ են եղել։ Եվ այս փաստերի միակողմանի մեկնաբանումները մեր աշխատություններում հիմնականում դրանով կարելի է բացատրել։ Չնայած, պետք է խոստովանել, որ եթե նույնիսկ դրանք հայտնի լինեին, դրանց հրապարակելը և մեկնաբանելը անհնար էր անցած տարիներին։ Այս ամենով հանդերձ, հարկ ենք համարում նշել, որ մեր նախորդ աշխատություններում Հայկական հարցի նկատմամբ մեծ տերությունների վարած քաղաքականությանը մեր տված գնահատականները հաստատվում են բազմաթիվ նորահայտ փաստաթղթերով։

Վերադառնալով խնդրո առարկա թեմային, պետք է ավելացնել հետևյալը։ Ռուսաստանում երկյուղ կար, որ Հայաստանի վրա Թուրքերի հարձակումը կարող է Անտանտին ներքաշել պատերազմի մեջ։ Այդ պատճառով լավագույն ելք էր համարվում Թուրքերի սահմանափակ առաջխաղացումից հետո, ինչը կստիպեր Հայաստանի կառավարությանը ընդունել Ռուսաստանի միջնորդությունը, դադարեցնել այդ պատերազմը։

Թուրքերի հետագա առաջխաղացումն իրական վտանգ էր սպառնում բուն Ռուսաստանին։ Փաստերը վկայում են, որ բացառված չէր այն հանգամանքը, որ Հայաստանն ամբողջապես գրաված Թուրքիան կաշխատեր Ադրբեջանում վերականգնել Թուրքիային նվիրված մուսավաթականների իշխանությունը, որի հետ Թուրքիան դեռևս ապրիլի 15-ին գաղտնի պայմանագիր էր կնքել, ըստ որի անհրաժեշտության դեպքում Թուրքական և ադրբեջանական ուժերը «գործելու էին որպես մեկ բանակ»[40]։ Թուրքիան այս դեպքում կհաստատեր իր գերիշխանությունն ամբողջ երկրամասում։ Դաշնակից տերությունները բոլորովին կմոռանային Հայաստանին տրված խոստումները և կօգնեին Թուրքիային՝ դիմագրավելու Խորհրդային Ռուսաստանի ազդեցության ուժեղացմանը Արևելքում։

Այս իրադարձությունները վախ էին ներշնչում նաև Վրաստանին, որի բուն տարածքների նկատմամբ ևս Թուրքիան իր հավակնությունները չէր թաքցնում։ Էլ չեմ խոսում այն մասին, որ դա հնարավորություն կստեղծեր Թուրքիայի և Կովկասի մուսուլմանական ուժերի համախմբման համար։ Կիրականացվեին Թուրքական վաղուց ի վեր մշակվող պլանները։

---

38 Նույն տեղում, էջ 33։

39 В. И. Ленин, ПСС, т. 42, с. 125:

40 PRO, F. O. 371/4954, p. 151.

Անդրկովկասում ծավալվող իրադարձությունները պայմանավորում էին բոլոր մեծ տերությունների քաղաքականությունն այդ տարածաշրջանում։ Անգլիան, դեռևս վստահ չլինելով, որ կարող է քեմալականների հետ ընդհանուր լեզու գտնել, վախենում էր, որ գրավելով Հայաստանը, Թուրքերը անմիջական կապի մեջ կմտնեին Խորհրդային Ռուսաստանի հետ և նրանց միջև գործարք կկնքվեր ի վնաս Անգլիայի։ Այդ պատճառով, դեռևս ամռանը, երբ հայտնի էր դարձել քեմալականների մտադրությունը՝ ներխուժելու Հայաստան, նա ջանքեր էր գործադրում ստեղծելու հայ-վրացական դաշինք և դրանով իսկ խանգարելու ռուս-Թուրքական մերձեցմանը։

Ստոքսը 1920 Թ. հուլիսի 15-ին իր կառավարությանը գրում էր. «Ելնելով իր շահերից, Վրաստանը խաղաղ Թե ուժային միջոցներով պետք է կանխի Հայաստանի անցումը բոլշևիկյան իշխանության տակ։ Նրա հարաբերությունները Հայաստանի հետ ներկայումս շատ սերտ են» և հնարավոր է, որ երկու կողմերը, ելնելով իրենց շահերից, «շուտով կհանգեն ռազմական դաշինքի՝ Վրաստանի և Հայաստանի միջև»։ Ստոքսը այն կարծիքին էր, որ այդ դաշինքը արդյունավետ դարձնելու համար երկու պետություններն էլ դաշնակիցների ռազմական օգնությունն են հայցում[41]։

Հայ-վրացական գաղտնի բանակցությունները դրական արդյունք չտվեցին։ Երբ Անգլիան և մենշևիկյան Վրաստանը Թուրքիայի հետ մերձեցման ելքեր գտան, Վրաստանը, վախենալով բոլշևիկյան Ռուսաստանի վտանգից, ապավինեց Թուրքիային։ Հայ-վրացական դաշինքից հրաժարվելը նա բացատրեց նրանով, որ այն կարող էր առաջ բերել Վրաստանում բնակվող մուսուլմանների, հատկապես աջարների, դժգոհությունը։

Խոր աշնանը Անգլիայի ամբողջ քաղաքականությունն ուղղված էր նրան, որպեսզի Հայաստանին ու Վրաստանին վերջնականապես կտրեր Ռուսաստանից և ռազմական ընդհարում հրահրեր Թուրքիայի և Ռուսաստանի միջև։ Այդ հեռանկարների դեմն առնելու իրական միջոց կարող էր լինել քեմալականների հետագա միջամտությունը և Հայաստանի և Վրաստանի խորհրդայնացումը, որին և հետամտում էր Ռուսաստանը։

Հայաստանի կառավարությունը ճիշտ չկողմնորոշվելով ստեղծված իրավիճակում, ոչ առանց հիմքի կասկածամտորեն վերաբերվելով Ռուսաստանի կողմից արվող ամեն մի առաջարկի և իրական դաշնակիցներ ձեռք չբերելով Արևմուտքում, ըստ էության մենակ մնաց մինչև աշնանը զինված Թուրքական զավթիչների դեմ։

Միայն 1920 Թ. նոյեմբերի 22-ին, երբ Թուրքիան արդեն վերջնագիր էր ներկայացրել Հայաստանին և իրադարձություններն իրենց տրամաբանական վախճանին էին հասել, Ազգերի լիգան որոշում ընդունեց «Հայկական ողբերգությանը վերջ դնելու համար անհրաժեշտ քայլեր ձեռնարկել... վերջ տալու հայերի և քեմալականների միջև գոյություն ունեցող թշնամանքին»[42]։ Եվ դարձյալ ոչինչ չձեռնարկվեց։ Որոշումն անհասցե էր։ Իսկ դեկտեմբերի 3-ին Լոնդոնում տեղի ունեցած բրիտանական, ֆրանսիական և իտալական կառավարությունների ներկայացուցիչների երկրորդ կոնֆերանսում որոշում ընդունվեց մերժել Հայաստանը Ազգերի լիգայի մեջ մտնելու առաջարկը, հաշվի առնելով Սևրի պայմանագրի 88-րդ հոդվածից բխող դժվարությունները և այն, որ Հայաստանի սահմանները դեռևս որոշված չէին[43]։

Խորհրդային Ռուսաստանը շահագրգռված էր պահպանել Հայաստանը որպես պետություն, բայց խորհրդային, սակայն այնպես, որ չառաջանա Բաքվի «վրդովմունքը»։ Այդ պատճառով էլ նա շարունակում էր «վիճելի» տարածքների հարցում բռնել նրա կողմը։ Ադրբեջանը և՛ տնտեսական, և՛ քաղաքական առումով ավելի էր պետք Ռուսաստանին։

---

[41] PRO, F. O. 371/4914, p. 137.
[42] PRO, F. O. 371/4964, p. 123.
[43] PRO, F. O. 371/4966, pp. 106, 107.

Դա մեկ անգամ ևս դրսևորվեց 1920 թ. հոկտեմբերի 12-ին, երբ Երևանում վերսկսվեցին հայ-ռուսական բանակցությունները։ Դրանք ավարտվեցին հոկտեմբերի 28-ին Հայաստանի համար շատ թե քիչ ընդունելի պայմանագրի նախագծի պատրաստմամբ, որը, սակայն, հետագայում Ռուսաստանի կողմից չստորագրվեց։ Այդ ընթացքում (հոկտեմբերի 14-ին) Ռուսաստանի կոմկուսի կենտկոմը արդեն որոշում էր ընդունել «Հայաստանում խորհրդային իշխանություն հաստատելու համար վճռական գործողությունների դիմելու անհրաժեշտության մասին»։

Թուրքերը ևս որոշել էին «վճռական գործողությունների» դիմել։ Նոյեմբերի 7-ին Գ. Չիչերինը գրում էր Բ. Լեգրանին. «Թուրքերը հայտարարում են, որ ուզում են իբր թե ազատել Հայաստանը դաշնակցականներից։ Դա խարդախություն է։ Անհրաժեշտ է դադարեցնել նրանց զենք տալը, քանի դեռ չեն ենթարկվել զինադադարի։ Մեկ օր անց նա ավելացնում է. «Թուրքերը նպատակ ունեն գրավել ամբողջ Հայաստանը»։ Թուրքերին զենք տալը այս շրջանում դադարեցվում է։

Ստեղծված բարդ իրադրությունից նույնիսկ ամբողջ ինֆորմացիային տիրապետող Վ. Լենինը դժվարանում էր գլուխ հանել։ 1920 թ. նոյեմբերի 21-ին նա հայտարարել է. «Կովկասում ներկայումս հյուսվում են շատ բարդ պայմաններ, որ վերին աստիճանի դժվար է ըմբռնել, ըստ որում մեր վզին կարող է պատերազմ փաթաթվել օրավուր... ստեղծվում է չափազանց խճճված իրադրություն»[44]։ Այն փորձում էր ավելի խճճել Ի. Ստալինը։ Այդ օրերին Անտանտի տերությունները տենդագին աշխատում էին վրաց-թուրքական դաշինք ստեղծել Ռուսաստանի դեմ[45]։ Մինչդեռ Ի. Ստալինը հորդորում էր Վ. Լենինին Թուրքիային մղել «հաջող պատերազմի» Վրաստանի դեմ, «ինչը Ռուսաստանին հնարավորություն կտա միջամտել որպես միջնորդ, և փրկարար»։ Ի. Ստալինի նպատակն էր այդ պատերազմի հետևանքով հասնել Վրաստանի խորհրդայնացմանը։ Այդ առաջարկը չընդունվեց։

Ի. Ստալինը շտապում էր։ Նրա հորդորանքով դեկտեմբերի 15-ին Ռուսաստանի կոմկուսի կովկասյան երկրային կոմիտեի անդամները «միաձայն ու գաղտնի որոշում են լուսաբացին անցնել Վրաստանի սահմանը»։ Դրան անմիջապես հետևում է կենտկոմի որոշումը՝ «Ոչ մի դեպքում թույլ չի տրվում։ Կտրականապես պահանջում ենք դադարեցնել իրաբերումը և չեղյալ հայտարարել որոշումը»։ Վրաստան ներխուժելը հետաձգվում է։

Դառնանք նորից Հայաստանին։ Այլ ելք չտեսնելով, Հայաստանի կառավարությունը նոյեմբերի 18-ին թուրքերի հետ կնքեց զինադադարի պայմանագիր։ Արտաքին գործերի նախարար Ա. Խատիսյանը մինչ այդ հանդիպում ունեցավ Ստոքսի հետ։ Վերջինիս՝ Լոնդոն ուղարկած հաղորդագրությունից հայտնի է դառնում, որ Ա. Խատիսյանը ցանկացել է իմանալ Անգլիայի կարծիքն այդ կապակցությամբ։ Ստոքսը միաժամանակ նշում է, որ Հայաստանի ղեկավարությանը հայտնի է դարձել, որ «դաշնակիցները, և մասնավորապես Անգլիան, օգնում են քեմալականներին, քանի որ վերջիններս հետագայում ցանկանում են կռվել բոլշևիկների դեմ»։ «Հայաստանի կառավարությունը,—ասել է Խատիսյանը,—հաշտություն է ուզում, բայց այնպիսի հաշտության է նա ուզում հասնել, որը, որքանով հնարավոր է, արժանանա Նորին մեծության կառավարության հավանությանը»։

Կարճ ժամանակ անց, Ստոքսը Ա. Խատիսյանին հայտնում է իր կառավարության կարծիքը՝ հետևյալ ձևակերպմամբ. «Մենք պարզորոշ հասկանում ենք, որ հայերն այլ ընտրության իրավունք չունեն, քանի որ սովետների հետ պայմանագրի տարբերակը, անկասկած, վատթարն է»[46]։

---

44 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 520։

45 РСФСР и Гер. Дем. республика..:, М:, 1922, с. 52, 53.

46 PRO, F. O. 371/4964, pp. 83—84, 85.

Իր հերթին, Հայաստանի կառավարության նախագահ Հ. Օհանջանյանը նոյեմբերի 19-ին հանդիպում է ունենում Բ. Լեգրանի հետ։ Վերջինս Մոսկվա է հաղորդում, որ Հայաստանի կառավարությունը պառակտվել է երկու թևի. «Համաձայնողական թևը պատրաստ է տարածքային անեզր զիջումների, մյուս մասը նկատի ունի դնել Կարսի և 14 թվականի սահմանների հարցը և այդ նկատառումներով հենվել Խորհրդային Ռուսաստանի օգնության և միջնորդության վրա»[47]։

Նոյեմբերի 24-ին Հ. Օհանջանյանի կառավարությունը հրաժարական տվեց։ Ստեղծվեց նոր կառավարություն՝ Ս. Վրացյանի գլխավորությամբ, որը հետևելով անգլիացիների խորհրդին, դիմեց Թուրքիային՝ անմիջապես սկսելու հաշտության բանակցություններ։ Ա. Խատիսյանը մնում էր հայկական պատվիրակության ղեկավար։

Ալեքսանդրապոլում տեղի ունեցած բանակցությունների ժամանակ պարզվեց, որ թուրքերը Հայաստանից պահանջում են ավելին, քան նույնիսկ Բրեստի պայմանագրով էին ստացել։

Ստեղծված իրավիճակը հղի էր ռուս-թուրքական պատերազմով։ Հաշվի առնելով այդ վտանգը, նոյեմբերի 27-ին Ռուսաստանի կոմկուսի քաղբյուրոն հրաժարվելով Հայաստանում «վճռական գործողությունների դիմելու» հոկտեմբերի 14-ի իր որոշումից, ընդունեց նոր որոշում. «Խնդիր չդնել արշավելու ո՛չ Վրաստանի, ո՛չ Հայաստանի, ո՛չ Պարսկաստանի վրա», այլ ամրացնել Ադրբեջանի պաշտպանությունը»։ Սակայն դեպքերի կայծակնային զարգացումը դրդեց տեղական ուժերին արագացնել Հայաստանի խորհրդայնացումը։ Բ. Լեգրանը այդ ուժերի տրամադրություններին ճիշտ ձևակերպում ավեց։ Նոյեմբերի 29-ին նա հեռագրեց Գ. Չիչերինին, որ «չի կարելի պասիվ վերաբերվել թուրքերի ձգտմանը՝ զրկելու մեզ Հայաստանի վերաբերյալ հարցի լուծումից»[48]։

Այդ օրերին Բաքվում ստեղծված Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեն հաշվի առնելով ստեղծված իրավիճակը և Հայաստանի բնակչության լայն շրջանների տրամադրությունները՝ Հայաստանում հռչակեց խորհրդային կարգեր և հայ ապստամբական գնդի հետ Ղազախով շարժվեց դեպի Երևան։

Նոյեմբերի 30-ին Բ. Լեգրանը հանդիպում է ունենում Հայաստանի կառավարության նախագահի հետ՝ խորհրդային իշխանության հաստատման հարցի կապակցությամբ կառավարության կարծիքն իմանալու համար։ Դեկտեմբերի 2-ին Բ. Լեգրանը հաղորդում է արդեն Դիլիջանում գտնվող ռուսական զորքերի հրամանատարին. «Հայաստանում խորհրդային իշխանություն է հռչակված։ Հայաստանի կառավարությունը հեռացված է։ Մինչև Հեղկոմի ժամանումը ամբողջ իշխանությունը տրված է զինվորական հրամանատարությանը, որի գլուխ մեր կողմից կարգված է Դրոն»[49]։

Այդ ակտը ամրագրված էր Ռուսաստանի ներկայացուցիչ Բ. Լեգրանի և Հայաստանի Հանրապետության կառավարության անդամներ Դրոյի և Հ. Տերաեբյանի միջև կնքված համաձայնագրում։ Այդ համաձայնագիրը, որով նախատեսվում էր նաև, որ Հայաստանի Հեղկոմի կազմում պետք է մտնեին երկու դաշնակցականներ, ուժ չստացավ, որովհետև չվավերացվեց կողմերի կառավարությունների կողմից և երբ Հեղկոմը մտավ Երևան (դեկտեմբերի 4-ին) այն դեն նետվեց որպես թղթի կտոր։

Դեկտեմբերի 1-ին Ադրբեջանի Հեղկոմը հռչակեց, որ «Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը ճանաչվում են որպես Հայաստանի Հանրապետության բաղկացուցիչ մաս»[50]։ Դեկտեմբերի 24-ին Ստոքսը Թիֆլիսից հեռագրում է իր կառավարությանը. «Ադրբեջանը հայտարարել է, որ նա զի-

---

47 АВП СССР, ф. 0207, оп. I, пор. I, д. 7, л. 152.

48 Նույն տեղում, էջ 159։

49 АВП СССР, ф. 0207, оп. I, пор. 9, папка I, л. 35.

50 Коммунист, Ереван, 7. XII. 1920.

ջում է Հայաստանին Զանգեզուրը, Նախիջևանը և Լեռնային Ղարաբաղը... Հայաստանի քաղաքական իրավիճակը դեռևս չափազանց անորոշ է»[51]։

Թվում էր, թե տարիներ տևած հայ-ադրբեջանական կոնֆլիկտին վերջակետ էր դրվում և պատմական ճշմարտությունը վերականգնվում էր։ Սակայն ընդամենը կես տարվա կյանք ունեցավ այդ ճշմարտությունը։ 1921 թ. հուլիսին պատմության անիվը նորից շուռ եկավ։ Լեռնային Ղարաբաղը տրվեց Ադրբեջանին։ Դրան նպաստեցին մինչ այդ տեղի ունեցած իրադարձությունները։

Թուրքիայի ճնշման տակ և, ինչպես տեսանք, Անգլիայի խորհրդով, արդեն իշխանությունից հեռացած Հայաստանի կառավարության պատվիրակ Ա. Խատիսյանը 1920 թ. դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլում Թուրքերի հետ ստորագրեց նրանց թելադրած պայմանագիրը, որով Հայաստանը սահմանափակվում էր 10 հազար քառ. կմ-ից քիչ ավելի տարածքում։

Արևմտյան Հայաստանի ազատագրման, «Մեծ Հայաստան» ստեղծելու պլաններն ի չիք դարձան։ Գ. Չիչերինը Ալեքսանդրապոլի պայմանագիրը գնահատեց որպես «հրեշավոր» պայմանագիր, «Հայաստանի համար անասելի ծանր հաշտություն, ըստ որի նույնիսկ ձևականորեն անկախ մնացած մասը փաստորեն ընկնում էր Թուրքիայից լրիվ կախվածության մեջ»[52]։

Ոչ Խորհրդային Հայաստանի և ոչ էլ Ռուսաստանի կառավարությունները չճանաչեցին այդ պայմանագիրը։ Նրանց կողմից մեծ ջանքեր պահանջվեցին, որպեսզի Թուրքերը իրենց զորքերը դուրս բերեին օկուպացված տարածքների մի մասից։

Թուրքական բարբարոսներն ավերման էին ենթարկել այն տարածքները, որտեղ ոտք էին դրել։ «Near East Relief»-ի ստացած տեղեկությունների համաձայն, սպանվել էին 60 հազար մարդ, վիրավորվել՝ 33 հազար, գերեվարվել՝ 45 հազար մարդ։ Օկուպացված շրջաններում քաղցից մահացել էին 26 հազար մարդ։ Եվ այդ ամենը մեկ և կես ամսվա ընթացքում[53]։ Նշենք, որ տարբեր աղբյուրներում տարբեր թվեր են բերվում։

Դեկտեմբերի 24-ին Ստոքսը հայտնում էր իր կառավարությանը. «Թուրքերը զավթած տարածքներից տղամարդ բնակչությանը բռնագաղթեցնում են երկրի խորքերը և, ըստ դեռևս չստուգված լրատվության, ճանապարհին կոտորում են նրանց»[54]։

Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Խորհրդային Ռուսաստանը կտրուկ փոխեց իր քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ՝ նրան վերցնելով իր հովանավորության տակ։ Վ. Լենինը 1920 թ. դեկտեմբերի 14-ին ցուցում է տալիս Գ. Չիչերինին «ամեն կերպ օգնել» Հայաստանին[55], և հանձնարարում նրան տեղեկանք պատրաստել Թուրքերի կողմից հայերին սպառնացող ջարդի և հայ գաղթականների վիճակի մասին։ Պատասխանելով նրան, Գ. Չիչերինը գրում է. «Այնքանով, որքանով խոսքը վերաբերում է հայ բնակչությանն ընդհանրապես, ապա մեր ամբողջ գործունեությունն այդ ուղղությամբ, ինչպես Ձեզ հայտնի է, նպատակ ունի կանգնեցնել Թուրքերի հետագա հարձակումը և ստիպել նրանց հետ քաշվել Արփաչայի այն կողմը... Դուք գրեք, որ Թուրքերին զենք տալը մենք կապել ենք Թուրքերի՝ Արփաչայի այն կողմը նահանջելու պահանջի հետ։ Մենք կարող էինք տալ ավելին, եթե հնարավոր լիներ Հայաստան ուղարկել ավելի շատ զորք»[56]։

---

[51] PRO, F. O. 371/6265, p. 69.

[52] Г. В. Чичерин, Статьи и речи, М., 1961, с. 196.

[53] PRO, F. O. 371/6266, p. 258.

[54] PRO, F. O. 371/6265, p. 70.

[55] В. И. Ленин, ПСС, т. 52, с. 33.

[56] Գ. Գալոյան, Պատմության քառուղիներում, Երևան, 1982, էջ 374։

Այդ բանը գիտեին նաև քեմալականները, որոնք համառորեն կառչել էին Ալեքսանդրապոլի դեկտեմբերի 2-ի պայմանագրից և, նույնիսկ 1921 թ. մարտի 16-ին ստորագրված ռուս-թուրքական պայմանագրից հետո, չէին ցանկանում իրենց ձեռքերը դուրս բերել Հայաստանին անցած տարածքներից ու նորից սպառնում էին զենքի ուժով այն պահել Թուրքիայի ձեռքում։ Միայն Խորհրդային Ռուսաստանի զգուշացումից հետո, թե «Թուրքիայի և Խորհրդային Հայաստանի միջև պատերազմը կնշանակի պատերազմ Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի միջև»[57], քեմալականները 1921 թ. մայիսին իրենց ձեռքերը դուրս բերեցին Ալեքսանդրապոլի մարզից։

Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո փոխվեց նաև Անգլիայի դիրքորոշումը Հայաստանի նկատմամբ։ Այս զենքը, որ ձեռք էր բերվել Անգլիայում վերը նշված ռազմական վարկի դիմաց, ամբողջապես հանձնվեց քեմալականներին, «որի համար Քյազիմ Կարաբեքիրը շնորհակալական հեռագիր է ուղարկել բրիտանական ռազմական իշխանություններին»[58]։ Այդ մասին իմանում ենք Անգլիայի արտգործնախարարության բարձրաստիճան պաշտոնյաներից մեկի՝ Մըք Դոնելի 1921 թ. փետրվարի 19-ի գրառումներից։ Այս փաստը մեկ անգամ ևս վկայում է, որ մեծ տերությունների կողմից հայ ժողովրդին օգնությունը ցույց էր տրվում զուտ քաղաքական նկատառումներով և ոչ թե նրա շահերի թելադրանքով։ Սա տխուր, բայց իրական փաստ է, առանց որի նկատառման չի կարելի հասկանալ մեծ տերությունների վարած քաղաքականությունը Հայկական հարցում։

Նշենք միայն, որ Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց մեկ տարի անց՝ 1921 թ. դեկտեմբերի 6-ին, լորդ Քերզոնը, պատասխանելով Հայկական հարցի շուրջ ստեղծված վիճակի մասին անգլիական պառլամենտի անդամ, „The British Armenia Committee"-ի նախագահ Ուիլյամսի նամակին, ի տարբերություն Լլոյդ Ջորջի, փորձում է «օբյեկտիվ» պատճառներով արդարացնել Անգլիայի քաղաքականությունը։ Նա գրում է. «Եթե Հայաստանը գտնվում է այժմյան վատ դրության մեջ, դա ամենևին էլ հետևանք չէ մեր գործունեության կամ չգործելու, այլ բացառապես աշխարհագրական, քաղաքական և ստրատեգիական պարագաների, որոնց համար պատասխանատու մենք չենք...»[59]։

Այդ աշխարհաքաղաքական «պարագաները» որոշակի նշանակություն ունեցան նաև Խորհրդային Ռուսաստանի վարած քաղաքականությունում, որը շարունակում էր սիրաշահել Թուրքիային և մեծ զիջումների դիմել, չնայած վերջինիս գրաված բացահայտ թշնամական դիրքին։ 1921 թ. մարտի 16-ին ստորագրվեց ռուս-թուրքական պայմանագիրը, որի տակ չկա Հայաստանի ստորագրությունը, քանի որ Թուրքիայի թելադրանքով Հայաստանին թույլ չտրվեց մասնակցել բանակցություններին։ Այդ պայմանագրով Թուրքիային անցավ Ռուսական նախկին կայսրության՝ հիմնականում հայկական տարածքներից 24 հազար քառ. կմ տարածություն՝ ավելի քան կես միլիոն բնակչությամբ։

Ավելին, 1921 թ. Խորհրդային Ռուսաստանը Թուրքիային տվեց 33.275 հրացան, մեծ քանակությամբ փամփուշտ, 327 գնդացիր, երկու ծովային ռմբակոծիչ և այլ զենքեր ու ռազմական հանդերձանք, ինչպես նաև 10 մլն. ռուբլի ոսկով՝ անհատույց[60]։

Պայմանագիրը հիմք հանդիսացավ Նախիջևանը Ադրբեջանին հանձնելուն։ Այդ պայմանագրի այն հոդվածները, որոնք վերաբերում են Հայաս-

---

[57] ДВП СССР, т. IV, М., 1960. с. 50.

[58] PRO, F. O. 371/6268, p. 148.

[59] Հայաստանը միջազգային դիվանագիտության... փաստաթղթերում, Երևան, 1972, էջ 705—706։

[60] ДВП СССР, т. II, с. 675.

տանին, միջազգային իրավունքի նորմերով իրավական ուժ չունեն, քանզի երկու պետություններ, առանց երրորդի մասնակցության, լուծել են վերջինիս սահմանների հարցը։

Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Անդրկովկասում ծավալված իրադարձությունները, Հայկական հարցի նկատմամբ մեծ տերությունների և Աղգերի լիգայի գրաված դիրքը, Արևելյան Անատոլիայում «Հայկական օջախ» ստեղծելու հարցը, ռուս-թուրքական 1921 թ. մարտի 16-ի պայմանագիրը, Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի հիմնահարցը, քեմալական Թուրքիայի նոր դիրքորոշումը Անտանտի պետությունների և Ռուսաստանի նկատմամբ, Ռուսաստանի և Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների հարաբերությունները, 1921 թ. հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագիրը և հարակից այլ հարցեր, որոնք կարող էին ընդգրկվել այս ուսումնասիրության մեջ այսօր խիստ արդիական քաղաքական ու գիտական հնչեղություն ունեցող հարցեր են։ Դրանց վերաբերյալ տարբեր երկրների արխիվներից մենք հայտնաբերել ենք արժեքավոր շատ նոր փաստաթղթեր, որոնք նոր լույս են սփռում հիմնահարցի վրա։ Այդ հարցերին կանդրադառնանք հետագայում։

АРМЯНСКИЙ ВОПРОС ПОСЛЕ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ И МЕЖДУНАРОДНАЯ ДИПЛОМАТИЯ

Академик НАН РА Г. А. ГАЛОЯН

Резюме

После первой мировой войны Армянский вопрос вновь стал предметом международной дипломатии.

Если в течение всего XIX в. и до 1917 г. великие державы рассматривали Армянский вопрос как средство расширения своих сфер влияния на Ближнем Востоке, то после Октябрьской революции 1917 г., когда мир разделился на два противоположных лагеря и была создана Армянская Республика, усугубился политический аспект решения проблемы.

В статье на основании выявленных в Лондонском архиве „Public Record office“ и в Архиве внешней политики бывшего СССР новых документов анализируется политика стран Антанты, США, Советской России и Кемалистской Турции по отношению к Армянской Республике и Армянскому вопросу.

В зависимости от перемены политической ситуации в Закавказье и Турции в течение 1917—1921 гг. неоднократно менялся политический курс упомянутых держав в Армянском вопросе. Ни одно государство не проявило искренней заинтересованности в справедливом решении Армянского вопроса. Выявленные новые архивные документы, которые впервые вводятся в научный оборот, раскрывают суть политических игр международной дипломатии, жертвой которых стал армянский народ.